



"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology  
Printed in JERUSALEM

# ՅՈՎԱՆԴՐԱԿԱՆ ԹԻՒԻՆ

---

## ԽՄԲՈՂԲԱԿԱՆ

- Ս. Արուոյա Յուղների Պատրիարք՝ Ամեն. Տ. Խղիէ Արքեպա. Տերքեան  
Կենացրական գիծեր Ամեն. Տ. Խղիէ Արքեպա. Տերքեանի

Եթու,

122

126

## ԿԲՈՆԱԿԱՆ

- Տօն Կարուղիկ Եկեղեցւոյ

Ս.

128

## ԲԱՆԱԱՑԵՂԾԱԿԱՆ

- Առաջարյան
- Գիշեր
- Նուեր
- \*

Վ.ՏԱՐԱՆԴԻՆ

131

131

ՄԱՐԶ ՄԱՐԴԱՐԵԱՆ

132

132

## ԲԱՆԱԱՑԻՐԱԿԱՆ

- Նարեկացին եւ նետազայ հայ գրականութիւնը

Մ. ՄԿՐԵԱՆ

133

## ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐՆԲԵՐ

- Կուսա Անապաս
- Հոգեաց կամ Հոգւոց Վանք

Ն. ԵՊՈ. ԾՈԱՎԱԿԱՆ

138

139

## ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

- «Հիակատար Քերականութիւն Հայոց Լեզուի  
Համեմատութեամբ 562 Լեզուների» ԱՆԱՒՆԱԿԱՆ Վ.Մ. ԶՊՀԱՆՑԱՆ
- Երուսաղէմի «Տագնապօք Երեկ եւ այսօր
- Քերահաստառում Ս. Արուոյս Տեղապահին
- Հնարքութիւն Պատրիարքի Առաքելական Մրգոյ Արուոյն Երուսաղէմի

140

145

150

153

158

158

159

160

160

160

160

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՄԾԵՆ

- Հեռագիրներ
- Եկեղեցականք - Բեմականք
- Պատօնականք
- Պատօններու փոփոխութիւններ
- Ծուրհաբաժնութիւն

تصدیرها - بطريركية الارمن الارثوذكس المدير والمقرر المسؤول - صاحب البلاطة الاسقف هايكازون ابراهيميان  
طبع في مطبعة دير الارمن - القدس  
العدد ٦ ١٩٦٠

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.  
Editor - Bishop Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.  
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

# — Ս Ի Ո Ւ —

Լ.Բ. ՏՈՐԻ - ՆԱՐ ՇՐՋԱՆ

1960

◀ ՑՈՒՑԻՑ ▶

Թիւ 6



Ս. ԱԹՈԽՈՅԱՆ ՆՈՐԵԿԱՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ  
ԱՄԵՆ. Տ. ԵՂԻՋԵ ԱՐԳԵԹԱ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

# Ս. ԱԹՈՂՈՅՍ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐքը

## ԱՄԵՆ. ՏԵՂԻՇԵ ԱՐՔԵՊՈ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

— Խորհուրդ մարդկան կամք Աստուծոյ —

Հայ Երուսաղէմի Պատրիարքական Աթոռը երկար ատեն թափուր մնալէ վերջ, այս անգամ կ'ունենայ իր օրինաւորապէս ընտրուած զահակալը, նախ չնորհիւ Աստուծոյ, Արուն հովանին միշտ անպակաս եղած է այս սրբազն Հաստատութեան վրայէն, յետոյ չնորհիւ Ս. Տեղեաց և համայնքներու իրաւանց նախանձախնդրուն հակող Յորդանանի Վեհափառ Թագաւորին, ինչպէս նաև Ս. Աթոռոյ նախանձախնդրի Միաբանութեան՝ որ չորս տարիներու տրատում փորձառութիւններէն վերջ, կու զար այն վրկարար եզրակացութեան թէ պէտք էր ազատազրել այս թանկազին ժառանգութիւնը բախտախնդրութիւններու, կողմերու և անհարկի միջամտութիւններու վտանգաւոր ազգեցութիւններէն, բարձրացնելու համար զայն իր դարաւոր իրաւասութեան և դերին:

Հայ Եկեղեցւոյ հորազատներուն ծանօթ են բոլոր այն տիսուր իրազարձութիւնները, որոնք չորս տարիներ շարունակ, օրինաւոր Տեղապահի բացակայութեան, բեմազրուեցան Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանքէն ներս և Յորդանանի մեր ժողովուրդին մէջ, իրենց տրատում ու ցաւառիթ արձագանդներով խառնվի մատնելով նաև արտասահմանի ազգային Մարմինները և ժողովուրդը: Զենք վերլուծեր եղածները, չենք ուզեր թարմացնել զանոնք անգամ մը ևս, տակաւին այդ խոռվին տակ ազգող յիշողութիւններուն մէջ. Թողունք որ մեռնելու սահմանուած անցեալլ արժանաւորապէս թաղէ իր մեռիները: Միակ ցաւը, որուն հազորդակից կ'ուզենք ընել մեր Եկեղեցւոյ հարազատները, այն է, որ աշխատանք տարուեցաւ ու կը տարուի տակաւին, զործազրուած դաւերն ու տարօրինութիւնները ներկայացնելու իրեր աստուածահաճոյ և աթոռաշահ, մարդոց կողմէ՝ որոնք առնուազն պէտք էր հեռու մնային այս քայլայիշ գործազրումներուն իրենց մասնակցութիւնը բերելէ:

Ինչ որ բարեպատեհ այս առիթով պիտի ուզեինք հոս արձանազրել, ատիկա սրբազն այս Հաստատութեան ճշմարիտ գերով պայմանաւոր իրազործութեարու պատկերն է միայն, տակաւին երէկ այնքան բրտորէն անարզուած մեր հոգիներուն խորը: Կ'ուզենք որ մեր ժողովուրդը վերջին ամսուր իրազարձութիւնները տեսնէ ոչ թէ ներկուած ակնացներով, այլ այն աչքերով, որոնցմով իրենց պազերը տեսան այս դարաւոր Աթոռը խոռվող տափնակները, միշտ կենալով մարզերէն վեր, Աթոռին իսկ զերազոյն շահերուն սպասարկու գուրզուրացող ոզիսով: Թող չշարունակուին ըսուիլ բաներ, թելադրուած կերպարանքներուն տակ, իւրացնելով զանոնք հայմածալին սրուած ախորժակիներուն և հետապնդուած ճղճիմ շահերու: Երուսաղէմի ասպարազը առնուազն իւզմատանքի

տագնապպ մըն է, անարզողներու և անարզուղներու պրտաճմլիկ դրուագ մը, աւելին՝ կանոնի, իրաւունքի և Արդարութեան անտեսումը, անարդարութեան մարտկոցներու ետին ապաստանած մարդերու խաղ մը։ Վստահ ենք թէ ամէն պարկեշտ հայ ակնարկուած այս իրողութիւններուն առջև սրտի սեղմումէն դուրս ոչ մէկ ուրիշ զգացում պիտի կրնար ունենալ:

Ս. Յակոբեանց այս դարաւոր ու մեծապանծ Հաստատութեան դերը, յարանուն կարիքները, միջազգային դիրքը, նուիրապետական հանգամանքը և մեր Եկեղեցիի ու արտասահմանի հայութեան այժմու կացութիւնը, անհրաժեշտ կը գարձնէին որ այս Աթոռի վերատեսչութեան հրաւիրուէր մէկը՝ որ իր բազմերս ձիրքերով, անպարտելի կորովով և հաւատարմութեամբ, կարենար ընել իր լաւագոյնը, փրկելու համար նուիրական այս Հաստատութեան վտանգուած դիրքն ու վարկը, թէ յաշս հառավարութեան և թէ չայ ժողովուրդին, որ այս տագնապպին մէջ բերաւ իր երկսայրի բաժինն ու միջամտութիւնը։

Անոնք որ մօտէն կը ճանչնան Ընտրեալը, իր իղձերուն անկեղծութեանը մէջ և այս Հաստատութիւնը իր բազմերս կարիքներու խորութեամբը, պիտի զիտնան վկայել թէ յարմարագոյն մարդն է որ կը կանչուի Հաստատութեան դեկը իր ձեռքերուն մէջ առնելու համար։ Այդ գործը դիւրին չէ անշուշտ, մանաւանդ այս օրերուն, երբ զիտենք թէ այս Աթոռը զահ մը ըլլալէ աւելի, պարտականութեանց շարք մըն է, պատկերաւոր բացատրութեամբ, փշեպսակ մը՝ ենթակայի ճակտին շուրջ ուրուած։

Դժնդակ հանգամանքներ կը զուգադիպին այս ընտրութեան, ջլատիչ ազդակներ գործի վրայ են տակաւին, շարունակելու քանդումի գործը, այս Հաստատութեան մտածումով տակաւին մինչև երէկ երշանիկ հոգիներուն խորը։ Դժուարութիւնները այնքան մեծ են, որ մարդ կը փորձուի մտածելու թէ հրաշքի մը պէտքը անհրաժեշտ է այս պայմաններու մէջ, չարիքը բարիքի վերածելու համար։ Այդ հրաշքի նկատմամբ թերահաւատ չենք, որովհետեւ անիկա եղած է միշտ, դարերէ ի վեր, այս նուիրական յարկին ներքեն, ուր Վիշտին սրբութիւնը և Յոյսին զօրութիւնը միշտ զիրար ամրողացուցած են, հակառակ ժամանակի և մարդերու աւելին։

Մենք կը հաւատանք մեր Եկեղեցւոյ մարտիրոս ոգիին և մեր ժողովուրդի սրտին, ի՞նչ փոյթ թէ տակաւին երէկ՝ արտում արարքներու և գայթակութեան թատր եղաւ այս Հաստատութիւնը։ Ի՞նչ փոյթ թէ երկիւզածութիւն թելադրող ամէն սրբութիւն, բարեպաշտութիւն արծարծող ամէն յիշատակ, քրիստոնէութիւն ներշնչող ամէն աւանդութիւն չնջուած կը թուին ըլլալ այսօր կարդ մը մարդոց հոգիներէն։ Հայ Երուսաղէմը, որուն ուխտաւոր ըլլալը գերազոյն պարծանքն էր հայ քրիստոնէին, նմանեցաւ, նախընթաց չորս տարիներուն, մրցապահներու տաղաւարի մը, որուն պահապահները մոռցան պահ մը իրենց սրբազն գերը։ Զօրաւոր ձեռք մը պէտք է որ կարենայ իր անկումի զառիթափին վրայ կեցնել այս սրբազն ժառանգութիւնը և արթուն աչքով հակել և անշէջ պահել հոգիի և լոյսի այն կանթեղները, զորս մեր երախտաւոր նախնիք կախած են այս Հաստատութեան սրբազն կամարէն։ Այդ լոյսը մեր հոգիին արթնութիւնն է և մեր ազգային պատիւն ու պարծանքը։ Խնչպէս նաև

զօրաւոր սիրտ մը՝ վերստին այս Հաստատութեան կապելու բոլոր դժկամ ու խոռված հողիները, Մեծն Եղթայակը քաղցրանչիւն շղթայի ձայնով և օղակ ներով:

Ս. Աթոռոյ ամէն Միաբան և իւրաքանչիւր հայ հաւատացեալ պարտի զիտ. նայ թէ այս Հաստատութիւնը զործի և շահութընկերակցութիւն մը չէ, ոչ այ շահազործումի առիթ՝ զայն օգտագործել ուզող ճարտարամիտներուն համար, այլ եղբայրութիւն մը, որուն իւրաքանչիւր անդամը պէտք է ապրի և իրագործէ հաւատքի, սիրոյ և ուժիքումի սահմանուած իր կեանքը, լցուն ծանր պարտա կանութիւններով իր եկեղեցին և ժողովուրդին նկատմամբ։ Այս սէրն ու նուփ ըումը ձեւ տարազ շեն միայն, այլ փոխադարձ զուրգուրանքի և յարդանքի կշիռ մը, Աւետարանի չափանիշով սահմանուած, ուր շատ ունեցողէն միշտ աւելի պիտի պահանջուի։ Մեր երկաթազիր պարտականութիւնը պիտի ըլլայ, հետեւարար, նախ բարձր պահել, քրիստոնէական այս սատանին մէջ, Հաստատութեան շահն ու պատիւր, Հայաստանեայց եկեղեցւոյ դիրքը և մեր կրօնական ու ազգային իրաւունքները։

## ★

Մարդը որ կը կանչուի Ս. Յակոբեանց Առաքելական Աթոռի վերատեսչութեան, ամենէն բարձրաթոիչ եկեղեցականներէն մին է, որ նախընթաց քսան տարիներուն ունեցաւ իր զործն ու դերը թէ Երուսաղէմի Պատրիարքարանէն ներս և թէ մեր եկեղեցական կեանքի վերջին իրադարձութիւններուն մէջ։ Որուն առջն իրենց զոյզ փեղկերով բացուեցան տակաւին երէկ, Հայաստանեայց եկեղեցւոյ նուիրապետութեան բարձրագոյն Աթոռին գոները։

Այս Հաստատութեան և Հայաստանեայց եկեղեցւոյ շահերուն նկատմամբ իր նախանձախնդրութիւնը, աննահանչ կորովի վերածուած է յաճախ, թէ առանց արտաքին ցոյցի և պոռոտ արտայայտութիւններու, որոնք շատ անզամ այդ առաքինութեան աղքատութիւնը կը մատնին ենթակային մէջ։ Այդ ողին իրեք արդիւնք պէտք է ընդունիլ, Երուսաղէմի երկու Աթոռաքանդ պայյըրներու մէջ իր վճռական դերը և հայ եկեղեցականի իր ուղիղ կեցուածքը անոնց նկատմամբ՝ որոնք մատերու խաղը չվախցան վերածելու տրտում անձնականութեան, կիրքի և ցաւալի փառասիրութեանց գուպարի, իրենց հոտած հաւեկիթը խաշելու համար ուրիշին տունն ու իրաւունքը կրակի տալու աստիճան։

Հակառակ իր խիզախութեան, նորընտիր զանակալը խորշած է միշտ ծայրայեղութիւններէ, քաջ զիտնալով թէ ամէն չափազանցութիւն կը պղտորէ մարդկային առաքինութիւններու աղքիւրը։ Սիրան է եղած առաւելաբար կեդրոնը իր էութեան և այդ սիրտը յաճախ շատ լայն բացած է իր թերը, տրտում միամտութիւններու և գառն հիասթափումներու առաջնորդելու աստիճան զինքը։

Քանակով քաշուած գիծերու և թիւով ճշգուած հաշիւներու մարդը չէ եղած երբեք, ինչպէս չէին իր մտատիպարները։ Զեէն, տարագէն ու տառէն վեր, ողին ու բարխուն ճշմարտութեան իր մտասեեռումը, յաճախ իր նկատմամբ սիալ հասկացողութիւններու տարած է մեր օրերու փարիսեցիները, որոնք ուղարկ կլելու համար մժեղին սակարկութիւնը փորձած են ընել, զաշ-

Փառասիրութիւնը, այն զգացումը, որ կրնայ լլկել ախեղծ հովիները միայն, իր սրտէն միշտ հեռու մնացած հրայրքներէն մին է եղած։ Ծրած է իր լաւագոյնը, կարողութիւններու իր սահմանին մէջ, ոչ թէ ի խնդիր անուան կամ համբաւի, այլ պարտականութիւն մը կատարած ըլլալու զիտակցութեամբ և գոհունակութեամբ։

Համեստ և ընկերային քաղցր հաղորդականութեամբ և անկեղծութեամբ տողորուած անձնաւորութիւն մըն է ներկայ Գահակալը։ Պոռոտ ցոյցերէ խորշող, նկատելով զանոնք ժանծաղամիտ մարդոց զինացում տուող կերպեր միայն։ Արհամարհանքով կը նայի իոլոր սուտ քանիերաւն, սուր քմծիծաղով մը՝ որուն առեղծուածային իմաստը կը փոխուի մարդէ մարդ և պարագայէ պարագայ։ Բայց իր այս կեցուածքը մարդոց վերէն նայիլ մը չէ, այլ արհամարհելն է զոռողութիւնն ու սնափառութիւնը անոնց՝ որոնք իրենց չունեցածովը աշտարակներ կը փորձեն կանգնել ողին մէջ։

Ահա այս կարգի հաստատ արժանիքներով անձնաւորութիւն մըն է որ կը քաղմի Ս. Յակոբեանց Առաքելական Գահուն վրայ։ Երուսաղէմբ իբրև ամենէն ատակ օճախը արտասահմանեան մեր Հաստատութիւններուն, վայելելով Յորդանանի քաջակորով և իմաստուն Խագաւորին համակրանքն ու պաշտպանութիւնը, վստահ ենք թէ կոչուած է իրակործելու իրմէն սպասուածը, հակառակ ստեղծուած տիրուր պայմաններուն և այն ընդհանուր բեկումին, զոր մեր ժողովուրդը ունի այսօր Հայ Երուսաղէմի նկատմամբ, իբրև արդասիք նախընթաց չորս տարիներու անիմաստ պայքարին։

Գահակալութիւն մը միշտ ծանր դէպք մըն է մեր ազգային և կրօնական կեանքին մէջ, յդի պատմական անդրադարձումներով, ճակատազրական ըսուելու չափ հետեանքներով։ Զենք նայիր ապագային մարդարէի աչքերով, բայց կը նանք որոշապէս ըսել որ Ս. Յակոբը շատ ընելիքներ ունի, քանի մը պատրիարքներու կեանքը լեցնելու և արզասաւոր ընելու չափ։ Զենք թուեր զանոնք, բայց զիտենք թէ այս Աթոռին կարիքները ազգին կու զան և ազգին կ'երթան։

Թող ամենուն խղճմտանքը անզամ մը ևս պայծառանայ այն զգացումով թէ Առաքելական այս Ս. Աթոռը, որուն կոչումն է եղած, ամէն բանէ առաջ, պաշտպանութիւնը Ս. Տեղեաց մէջ Հայոց ունեցած իրաւունքներուն, այդ նպատակին պիտի շարունակէ ծառայել դարձեալ, հաւատքի, բարեպաշտութեան և մտաւոր լուսաւորութեան միջոցներով սպասուորելու մեր ժողովուրդին, ցրուած ի սփիւռս աշխարհի։

Մաղթենք որ Տիրոջ հովանին միշտ անպակաս ըլլայ արժանընտիր Պատրիարքին և զինուորեալ այս Միաբանութեան վրայ, որպէսզի պակուին բոլոր ակնկալութիւնները Միաբանութեան և Ազգին, ի փառս Աստուծոյ և ի շահ մեր եկեղեցին ու ժողովուրդին՝ որ ա'յնքան պէտք ունի շինարար ձեռքերու և իմաստուն տնտեսներու։

ԽՄՌ.

## ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԵՂԻՉԵ Ս. ԱՐՔԵՊՈՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

**ԸՆՏՐԵԱԼ ՊԱՏՐԻԱՐք ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԱԹՈՌՈՅՆ**

(ԿԵՆՍԱԴՐԱԿԱՆ)

•

Եղիչէ Արքեպոս. Տերեկեան ծնած է 1910ին, Վասպուրական աշխարհի Ռևոլյուց գաւառով Կայսերական զիւղը, երեք ժամ միայն հեռու Նարեկայ Վանենե, նախկին անունով Նդիազու: Մկրտուած է տեղույթ Ս. Սարգս Եկեղեցւոյն մէջ, որդի զիւղապետ Դաւիթի եւ Աղաւելիի:

1915ին, կը զաղբէ իր ծննդացը հետ Պարսկաստան. Վասպուրականի՝ հայ կամաւուներու եւ ուսւաց ձեռուելեն վերջ նորէն կը դառնայ Վան, եւ ապա, ուսւական բանակի համանջու առեն վերաբէն մեկնելով, կը հասնի մինչեւ Պարսկապա Միջազգեմի: Նախ նոն, յետոյ նահան էլ Ամարի զադրակայանին մէջ կ'ընդունուի ուրբանոցի վարժարանը, ուր մինչեւ 1922 կը հետեւի դպրոցական ուսմանց դասրթացքի:

1922ին, երբ Հայ Բարեկործական Ընդհ. Միութեան բարերարութեամբ բազմահայրէ հայ ուրբեր Միջազգեմին կը բերուին Երևանուկմ, անձնաց հետ եր նաեւ ինքը, որ երկու տարի եւս Սուրբ Քաջարի Բարեկործական Արարատեան Արքանոցին աւակերտէի վերջ, 1924ին կ'ընդունուի Ս. Արուոյա Ժառանձրաւուաց Վարժարանը: Նախ Մեսոս Մրացանի եւ ապա Կիւրեղ Վարդապետի տեսչութեան օրով, ուր տարիներու ընթացքին, կարդ Բայ կարգէ կ'առաջարկեցի Հոգելոյ Դուռեան Մրազան Պատրիարքի, Բարդէն եւ Աղաւելիի Մրազաններու, Հայր Գրիգորէնի, Մխաչեանի եւ վերջին տարին Թորգոն Պատրիարքի: Վարժարանի ընթացքը կ'աւարտէ յաջազուրեամբ: Իբրև աւարտական հնութեան նիւթ իրեն կը դրուին Լամբրոնացիի Հոգեգալստեան Ներբուզը եւ Գրիգոր Տղայի Թուղրը առ Տուտեղին գրուած:

Սարկաւագութեան ձեռնադրութիւնը կ'ընդունի Դուռեան Պատրիարքին 1928ին, իսկ վարդապետականը՝ Թորգոն Պատրիարքին, 1932ին: 1933-36 զաւազանակիր եւ անձնական բարերարի պատօններ կը վարէ Թորգոն Պատրիարքին նովր եւ իրեն կ'ընկերանայ նւրապայի իր ցըապտօյի ընթացքին: 1937ին կը հրաւիրուի Տնտուշ Ժառանձր Վարժարանի եւ Ընծայարանի, եւ կը վարէ ոյնց պատօննը մինչեւ 1945, Կիւրեղ Պատրիարքի թնդութիւնը:

Դպրոցի Տեսչութեան ցըանին իր յայ պիտի զային իր նարաւ Վարուելակերպի ու Վաշազիսութեան ձիրեւրը: Այս տարիներ կառավարեց Վարժարանը իր բարի սրտին ազգեցութեամբը եւ իր հոգին բայցրութեամբը: Եղիչէ Մրազանը այդ օրերուն՝ յաշա ուսանութեան եւ ժողովութիւն, հմայիչ եւ առինքնող, եւ ամենէն ազդեցիկը Միջաբանութեան երիտասարդ վարդապետներուն:

Իր տեղային ցըանին, Վարժարանը պատրաստեց աւելի հան հան հոգեւորական-ներ, սարկաւագ ու վարդապետ, որոնց մեծ մասը պիտի հեռանային յետոյ, 1943ի Վանի տագնապին հետեւանովը: Վանի իշխանութեան եւ կարգ ու սարքին գեմ յարուցուած այդ պայքարի զիւղաւոր դերակատարներէն մին կը հանդիսանար ինքը, արգելք ըլլալով կարգ մը բախտախնդիրներու, որոնք ունակոյն ընել կ'ուզէին կանոն ու կարգը այս նուիրական Հաստատութեաններ ներա:

Իր դպրոցի տեսչութեան՝ առաջին տարիներուն, տեղի է թորգոն Պատրիարքի, Նահան կերպերեանի, Օսականի եւ ուրիշներու, ֆառանձաւուրաց Վարժարանն ու Ընծայարանի բարական նմանարիս վարարանի մը պիտի վերածուեր, ազգային ու կրօնական յառաջապահ զգացուրեամբ եւ բայց ունչով ու ոգիով: Այս նոր ոգիի գոյաւումն մէջ կ'ըստին օրուան Տեսչին:

Քրական Երեկոյին, դասախոսութիւններ եւ մատուրական փորձեր, անխափան

պարբերականութեամբ տեղի կ'ունենային, Միաբանութեան ներկայութեամբ եւ ուսուցչութեան եւ աշակերտութեան մասնակցութեամբ։ Մատուցական վայելի նւմարիս պահեր եկնանեն, ուսանովներուն տալով իմացական եւ նոգեկան մատարդութեան խողց պատեհութիւններ։

1944ին, Գիւրեղ Արքազանի Պատրիարքութեանն յետոյ, կ'ընթառի Լուսաւարապետ Ս. Արոռոյ, իսկ Պատրիարքի եղեաման վախճանեն վերջ, 1949ին, Տեղապահ Երևանականի Պատրիարքութեան։ 8 Յունիս 1951ին, Ս. Էջմիածնայ Մայր Տաճարին մեջ կ'ընդունի Եղիսկողոսական ծեռնագրութիւն, իբրև օճակից ունենալով նորին Ս. Օծուրիւն Ամենայն Հայոց Կարողիկոս Վազգեն Ա. Յ. Խուրեն եւ Նորայր Վարդապետները եւ Սահակ Ռ. Վ. Ր. Տեղ Յափիանները։ Այս զոյթ պատօնները կը Վարեկ միջնու 1956ի վերջաւորութեան, երբ իր բացակայութեանը, Տիրան Արքազանի եւ իրեններու կողմէ բանագրաւաճան կ'ենթաւուի Առաւածականի Հայոց Պատրիարքաւանը, ապօռեն ժողովներով եւ օրուաւեներով կը պատօնացրիւի օրուան Տեղապահ, Եղիշէ Արքեպոս։ Տերեւեանը եւ կը Վարաւի Միաբանութեանն Խոկ Ամենայն Հայոց Կարողիկոս Վազգեն Ա. կը պատօն զինքը Փիլիսոնացրիւութեամբ եւ արքութեան միջնումով։ 1960 Մարտ 26ին կրկնին կը վերադառնայ Վազգեն եւ Միաբանութեան վափառավ կը Տիրանայ իր նախկին պատօններուն եւ կ'ընթառի Պատրիարք Առաք. Ս. Արոռոյ։ 9 Յունիս 1960ին, Ն. Ս. Օծուրիւն Տ. Տ. Վազգեն Ամենայն Հայոց Կարողիկոս իւնուը իւնու կը վերաբարձն Փիլինը եւ արքութեան պատիւր։

Իր Տեղու պահութեան եօրք Կարինենուն, երբ Պատեսանին աղետին իբրև հետեւանք Միաբանութեանն ու ժողովուրդը գրկաւած եին իւնուն եկամուտի աղբիւներեն, եւ անզոր ու անհայ կը սպասեին լաւագոյն օրերու խասումին, Եղիշէ Արքազանը նույրակներու առամամբ, սրառուց կաշերով եւ դիմումներով պիտի բախե բոլոր սիրեցր օսաւ եւկիր ազոյ բախսաւում մեր արենանիցներուն եւ ազգային մարմիններուն, անոնց բոլորին օժանդակութիւնը խնդրելու այս դարաւոր Հասաւութեան եւ անոր պարիսպներուն ապաւին անօյնական մեր ժուլուրդին համար։ Ա. Ենունի ի զոյթ գրուած զաներուն, նսխ ազգական Հ. Բ. Ը. Միաբիւնը, յետոյ Ամենիկայի, Եղիպտոսի, Երակի, Լիքանանի եւ ալլուր գքնուող մեր հաւաքանները, նայու Վայել զարգումներով պիտի դիմաւուեին կարիքը, հանգերձելով աներածեան բարիկի կարօսեալներուն։

1932—1956, Խանջորա ասքիներու ուշանին, Եղիշէ Արքեպոս։ Տերեւեանը, վերոյենալ զիմաւոր պատօններեն եւ աշրամ զործերն զաս, եղած է տարիներով անդամ Պատ. Տնօրեն Ժողովով եւ Խանջորա Ամենայապետ Միաբ. Լնդի. Ժողովոյ։ Ժառանգ. Վայելաւանի եւ Համայաւանի Տեղապահ Տեղապահ եւ անկ յետոյ, դասաւու եղած է նոյն վարժարանի բարձագոյն կարգերուն եւ Համայաւանի, աւանդելով Հայոց Պատմութիւն, Լնդի. Եկեղեցւոյ Պատմութիւն, Քարգիսութիւն, Հավական Ասուածաբանութիւն, Քարոյական Ասուածաբանութեամբ, Վարդապետական Ասուածաբանութիւն, Հոգեբանութեամբ։

Թուրքակ Պատրիարքի մասն վերջ, 17 տարիներ տարունակ վարած է Ս. Արոռոյ պատօնապերը «Արօն» ամսագրի խմբագրավետութիւնը, նոխացնելով անոր Ենթարկական, կրօնական, պատմական եւ իմացական բաժինները, բազմա յոդուածներով։

Հեղինեակն է բանասեղծական չորս հատուներու՝ «Մաղղալինեն Մեղրամոնկ», «Խորակական Գիշերներ», «Անցուղի եւ Ակեղիղամա», ինչպէս նաև երեք արձակ հատուներու, — «Հայաստանեայց Եկեղեցին Երեկ եւ Այսոր, «Նարեկը Հայ Գրականական Ասուածաբանութիւն, Վարդապետական Ասուածաբանութիւն, Հոգեբանութեամբ։

Ասունցին զաս ունի համար մը հատուներ լիցնազ Ենթարկական եւ արձակ գրութիւններ, մեծ մասը գրուած վերջին չորս տարիներու ընթացքին, Ամենանի իր պանդիստութեանը օրոշանին։ 8 Յունիս 1960ին, Միաբ. Լնդի. Ժողովոյ կողմէն, կ'ընթառի Պատրիարք Երևանականի Առաքելական Ս. Արոռոյն։

ԿՐՕՆԱԿԱՆՏԸՆ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ

«Եկայք ըինեցուք ...»

Եջմիածնի Կաթուղիկէի հրմարկէքը խորհրդանիշ տօնն է Հայ Եկեղեցին, իրեւ գեղեցիկ ու սբանչելի իրագործումը կուսաւորչի երազին։ Տառապանքներէ, չարչարանքներէ, Խոր Վիրապի արհաւիրքէն չվախցող, պայծառ տեսիլքի մը սեւուած հոգին կոթողը, որ իր մէջ պիտի տաղաւարէր Հայ ժողովուրդի դարաւոր ապրումներու և իրագործումներու կորիզ ծրագիրը, Աստուածորդւոյն մատովք գծուած։

Անոնք որ ծանօթ են մեր Եկեղեցին ծագման, զարգացման և դերին, մեր պատմութեան գարերն ի վեր, անոնք միայն կրնան ըմբռնել տեսիլքով ու տառապանքով գոյաւորուող արժէքներու հրաչքը։ Այս է պատճառը անշուշտ որ Հայ ժողովուրդը մեր հաւատոյ հայրը բնորոշած է կուսաւորչի տիտղոսով, իր երախտագիտական զգացումներէն հիւսուած անթառամ ու լուսաւոր պսակ մը զետեղելով անոր անօւանը չուրջ։

Բառեր կան, որնք իրեւ իմաստ և պատկեր, վեր կը մնան ժամանակէն և որակումի չափերէն։ Անոնք երրիմ գործեր են, համբաւներ, ժամանակի աւերին դէմ ցցուող ուժեր, չարին ու խաւարի դէմ տարուած յաղթանակներ։ Լուսաւորչի մակղիրը մին է աննոնցմէ։ Մարդը որուն դէմքն ու գործը մեր պատմութեան լոյսին և սերունդներու հոգիին մէջ անվթար կը կենայ, քաղցը ու ջերմ, կը լուսաւորէ մեր դարերը, մութէն դուրս կարկառուող փառոսի մը նման։

Լուսաւորչի ուժը, ամէն բանէ աւելի, բարյական էր, որովհետև գաղափարը յանուն որուն կը հոգեզինուէր ինքը, Քրիստոնէական կրօնն էր, հոգեկան ուժի գերազոյն կառույցը, որ պատրոյն է գաղափարական բոլոր իրագործումներու։ Աստուծոյ հոգին, ինչպէս սովոր էին բսելու մեր աստուածաբեալ նախնիքը, ստեղծումի

և շինութեան այն հզօր բնագդը, որ մեր վիշտերէն և վերքերէն կը հանգերձէ իմաստութեան ծաղկիք, ուրիշ բան չէ, բայց կամար-գտարին, աննիւթական յլացքը, որ չի բացատրուիր բայց աստուած այնին կը տանի զմեզ։ Այս մտածումով նայած են կուսաւորչին ու իր ձեռակերտին, դարերով, մեր ցեղէն բոլոր անոնք՝ որոնց նայուածքը գիտցեր է միշտ ներկայէն անդին սաւառնիւ։

Իր կեանքը, հէքեաթ մը ամբողջ, անցեալի ոսկեփոշիէն հիւսուած։ Մեր ո՞ր հերոս ունի իր ճշգրիտ կինսագրութիւնը, նուրիսական մեր մատեաններու մէջ։ Սակայն թուզթերուն չտուածը բաեր է մեր ժողովուրդը, սուրբի և առաքինութեան լուսապակներով զարդարելով անոնց զանկերը։

Բիւրեկ կախարդանքը իր անձին, չինուած պէտք է ըլլալ մեր զիրքերէն աւելի, մեր ժողովուրդի տրտում բայց քաղցը լինելութենէն, վասնդի ամէն մարդ իր ժամանակին և ընկերութեան պատկանելին առաջ՝ իր ազգին է ամրողջապէս։ Ահա թէ ինչու մեր ժողովուրդը կը հաւատայ թէ իր Եկեղեցին արգասիքն է Աստուծոյ հրաշքին, երբ Աստուծմէ կանչուած ընտրեալ իր զաւակները կրցեր են, ի հարկին երկինքները բանալ, իշեցնելու աստուածներ հայ հոգին վրայ։

Պատմութիւնը մարդերու կիանքին յիշատակարանը ըլլալէ աւելի, գաղափարներու, մաքի և հոգիի խոտացած վիճակներու արձանագրութիւնն է։ Ճիզը, զոր ժողովուրդները կ'ընեն, շննելու իրենց կողիին պատկերը։ Թանի՛ ժողովուրդներ, հզօր ու տիրական, այսօր չունին իրենց կողիի այդ պատկերը, ազգերու պատմութեան պատկերասրաւէն ներս, ոչ թէ իրեւ թիւ ու անուն, այլ իրեւ կրկէսը իրարմէ հզօր առաքինութեանց, որոնցմավ գատեպնդ ազգերը կ'անցնին արեան ու կրակին մէջէն, իրագործելու ինքչինքնին։

Քրիստոնէութիւնը Հայ ժողովուրդին համար արգասաւոր ուժ ըլլալէ վերջ, լոյսէ, հետեաբար անոր մատուառէկները սրտի և մտքի լուսաւորիչներն են։ Երկնային է այդ լոյսը, հրաշակի կանթեղով մը կախուած մեր երկրի երկնակամարէն, որուն

մէջ իւզի փոխարէն լուսաւորչի և մէր սուրբերու արցունքն ու արիւնն է որ կ'այրի, ինչպէս կը հաւատայ մէր բանաստեղծ ժառագուրդը: Ա՞ր զիրքը կրնայ աւելի լաւ բարացուցել Կրիկոր Պարթևի գործը, քանի այս հէքիաթը, չիսուած մէր եղակչն:

Թթվածոնէութեան ոզին և հոգիներու ծարաւն է որ կը մշէն զինք իր առաքելութեան և իր խօսքերուն և զրութեանց մէջ մեր աշխարհի խորհրդէն ժայթքող ազբերակի մը ինքնարերականութիւնը կայ: Այսպէս իր խորհուրդը մարդկային հոգինն խորութիւններէն է որ վեր կու զայ: իր կեանքը քրիստոնեան սրտին ներքին տառամք է, իր տիարութենէն տանջուած, իր էութենէն շախչախուած, մեղքէն անդուռուած, բայց երկնաւոր Հօր գոհարանութիւններովը շողափայլ, և Անոր վրայ ունեցած զստակութեամբը բերկրալից, սրովկնետե զգացած է տատուած ային չնորդքին ճառագայթելը իր վրայ, ինչպէս արելը որ զարնան հետ նոր կեանք մը կը բերէ ձիւնէն զինանակ և անձրկէն թոռմած բոյսին: Ուսաւորիչ առաքեալ մըն է որ իրերը կը տեսնէ ոչ թէ ինչպէս որ են, այլ ինչպէս որ պէտք է լլլային անոնք: իր մէջ բանմը կայ հզօր չունչէն փոթորկին՝ որ կ'ալէ կը տանի ճամբուն վրայի խոշնդպուները: Հայ նորածին Քրիստոնէութեան մեծ ներշնչեան է ան, որ մէկ կողմէն կ'առանքնէ ամբոխները և միւս կողմէն կը նկէ արքաները, զանոնք նախ խոզի, յետոյ սուրբի երածելու համար:

Դարերով հաւատացած ենք ու կը հաւատանք գեր թէ Հայ Եկեղեցին երկնային պարզեն է Հայ ժողովուրդին, թէ ան ոգի է, ուժ է և լոյս է, կամ մարմացումը այս բոլորին, Այդ լոյսի ջահակիրները հղած են, մեր ազգային չափանիշերով առնուած, Լուսաւորիչ, Ներսէս, Ահակ և Մեսրոպ, Նարեկացին, Ծնորհալին, մէկ խօսքով երկար շարանը Թարգմանչաց սերունդին, որնք Ե, գարէն մինչեւ մեր օրերը կ'երկարին, լուսաւորելով մոայլը մեր պատութեան, անոր մութերուն վերե բացուելով, քաղցրացունչ ու բացիսիիկ փարուներուն նման։

Հայ Եկեղեցին կրօնական հաստատութիւն մը Ալլագով հանդերձ. իր մէջ միշտ տիրական եղած է ազգայինը: Կրօնքը նոյնացած է մեր ազգային կհանքին հետև կ դարձած միւնոյն: Բոլոր քրիստոնեայ ժողովուրդներու համար կարելի է ըսկել թէ անոնք ենկու ազգեր են, ցեղային և կրօնական զատորչութենքը: Մեր Եկեղեցին և ժողովուրդը սեռն ու սերտ առէնքներով թիզանուած են իրարու: Այս իրազութեան մէջ է մեր Եկեղեցւոյ թէ՛ ուժը և թէ՛ տկարութիւնը...: Միւս եկեղեցիները՝ կաթոլիկ, Օքիստոփո, Բաղրամական, ազգային եկեղեցիներ չեն, այլ տարրեր ազգութիւններ, կրօնական հասարակաց յայտաբարի մը ներքեւ:

Հայ Եկեղեցին կը նշանակէ Հայ գլուխ,  
Հայ զրականութիւնը, ճարտարապետութիւնը, երաժշտութիւնը, ծէսը, զումարը  
մեր հոգեկանու մատասորի բրագործութիւնը, աւելին՝ Կաթողիկէն մեր լիգերուն և երազ-  
ներուն, զգալի և գործօն հայ կերպարանքը  
Քրիստոնէութեան, այսինքն Հայ կերպը  
Աստուծոյ մօտենալու, ինչպէս կը սիրենք  
ըսել յաճախ: Բոլոր անոնք, որոնք գիտեն  
զգալ մեր պատմութիւնը, կրնան վկայել  
թէ Հայ ժողովուրդի ինքնութիւնն ու  
ճշմարտութիւնը իր Եկեղեցին մէջ կը  
ման բիւրեղացած: Եթէ ժողովուրդի մը  
իտէալն ու ինքնութիւնը կը շինուի իր  
պատմութեանը մէջ, Հայ Եկեղեցին իրեն  
գանձարանն իր ժողովուրդի գարաւոր ապ-  
րութիւնը, գեղեցիկ ծաղիկն է իր յոյսին  
ու հաւատքին:

Հոգեկան այս իրազութիւններէն մեկնելով, կը հաւատառք թէ Հայ Եկեղեցին այն գերազո՞ն վայրն է՝ ուր հայ մը ինքնքինքը ամենէն աւելի հարազատ կը զգայ իր եղբայր հայուն։ Առանց Հայ Եկեղեցոյ ջերմ զգայութեան, մենք հազիւ թէ հայ ենք։ Մեր այսօրուան օտարութիւններուն մէջ, ինչ որ համ և խմաստ ունի, անկէ կու գայ զարձեալ։

ինչպէս երէկ, այնպէս ալ այսօք, Հայ  
եկեղեցին միայն կընայ ըլլալ այն սրբաւ-  
զան գետինը, որուն շօրչը զինադուիլի  
կանչուէին մեր կատաղի, այլամերժ ախոր-  
ժակները, ջլատիք բնազգները: Այն վայրը,  
ուր կարենային ժամադրուիլ այս ժողո-

վուրգի ամենէն ազնուական յատկութիւնն սերը, ողջմուռթիւնը, խելքը, պայմանն սերուն յարմարելու իմաստութիւնը, իբ Եկեղեցին չքեզ կերպարանքին մէջ, որով շիներ ենք մեր պատմութիւնը և հասեր այս օրերուն:

Մասը կը ճանչցուի իր պատուզէն, ինչպէս կ'ըսուի առասարակ: Հայաստանի այց Եկեղեցւոյ նշանակութիւնն ու արժեքը պէտք է փնտուել իր արդեանց մէջ: Հայաստակ քաղաքական պայմաններու սահզծած անդուին, հայ ժողովուրդի քրիստոնէաց ցումը և քրիստոնէական սկզբունքներուն կեանքի գերածումը այնպիսի իրողութիւն մըն է, որ մեր պատմութեան մէջ կը մնայ եղական և ինքնուրոյն:

Հայը ճակատագրուած էր կարծես քրիստոնէութեան: Իր ապրելու տեհջը և յանուն անոր իր մենակու մութ կամեցուութիւնը բայց վերջանական յազմանակին յոյաց կը զատեն զինքը ուրիշ ժողովուրդներէն, ոչ միայն իր ինքութեամբը, այլ նաև զայն տեսականացներու կամքին ու խորհուրդները Մեր հայրեց իրենց պարագրուած կեանքի խաչելութեան ճամբան պարզապէս մեռած ըլլալու համար:

\* \*

Իսկ այսօր, մեր գոյատեման միակ զէնքը, մեր միութեան գերազոյն կապը, մեր անցիւլը, ներկան և ապագան իր ոսկի ծիրին մէջ առնող կարիլիութիւնը, մեր պահապան սուրբը, Հայաստանի այց Եկեղեցին, Սփիւռքի այս արտօնութիւնն սերուն մէջ, վերածուած է բաժանման ազգակի և մեր հոգիները բաժնող դանակի: Ասիկա օրուան բաղակականութեան սխալ կեպով ծառայելու իր ձգութիւնն է: Անշնչւշտ կարելի չէ միկուսացած մեալ ժամանակի ու միջաշայրի ազգեցութիւնն: Միւս կողմէն սակայն ժամանակին ու պատահարներուն տրսւելիք տուրքը պէտք չէ այնքան շատ ըլլայ: Հեղեղենելու չափ հոգեոր այս անտեսութիւնը իր գերէն:

Երբ ուժ մը կը չեղեցուի իր սեփական ուղղութենէն, ան՝ իրը ուժ այլն չի կրնար ծառայել ոչ ինքպինքին և ոչ իր չուրջ գարձող նկատութերուն: Եղր գուրս կը հանենք մեր Եկեղեցին իր իսկական գերէն ու կը բռնագատենք զայն մտնել

քաղաքականութեան մէջ, կամ գետին դառնալ քաղաքական խաղարկութեանց, զայն կը վերածենք զէնքի մը՝ որ փրկարար ըլլալու փոխարէն սահմանուած է վասնգաւոր ըլլալու:

Քաղաքականութիւնն ամրոգնովին հեռու մնալու կարելի չէ, մահաւանդ մեր օրերու պատմական արագ դասաւորութեան ընդմէջէն: Կարելի չէ նաև սպասել որ մեր ազգային և հասարակական կեանքի մէջ կանց առնեն հոսանքային խորութեան ու շարժութեանը, սակայն անհրաժեշտ է որ անոնք չստիպին Եկեղեցին որ շարժի համաձայն իրենց ուղղութեան: օպագործելու անոր կարգ մը անվիճելի առաւելութեանները և զիրքը՝ զոր Եկեղեցին ունի գաղթաշաբարէն մեր համայնքային կազմակերպութեանց մէջ:

Եկեղեցին միակ ջանքը պէտք է ըլլայ ծառայել ժողովուրդի հոգեոր արաբական կեանքին միայն և հաւատարիմ մեալ իր բնակած երկրին իշխանութեանց: տալ «Զկայակերն» կայսեր, և զեստուծոյն՝ Աստուծայօն: Մեր ժողովուրդի գիտակցութեան ու ազգային և հոգեոր պարտականութեան ամենէն փառաւոր շըջաններէն մին պիտի սկսի այս վայրիկանէն, երբ գիտնայ, առանց իրարմէ բաժնելու, զատորոշել մեր կեանքի միկանը հիւսող այզոյդ իրողութիւնները և զանոնք գործարիել անշեղ ու անչփոթ կերպով: Այն ատեն միայն իրապէս և իրաւապէս պիտի կրնանք երգել մեր Եկեղեցւոյ շինութեան երգը, անկայք շինեցուք ոուրբ զիսրանն լուսոյց, կատարելով այսկերպ մեր պարտքը հանգէպ կուսաւորչին, մեր Եկեղեցին և Աստուծոյն, որուն վայել է փառք յաւրիտեան: ամէն:

b.



# ԱՐԵԱԼՈՅԱՆ ՍՏԱՑԻՈՆԱՐ

## ԱՐԵԱԼՈՅԱՆ

Արաւոյսին,  
Երկնին մէջ կը մարէին  
Ասղերն ամէն,  
Ծոցն ամպերուն,  
Դագաղներու առջեւ անտես,  
Կը վառէին լոյսեր կապոյս:

Երկրի վըրայ,  
Կը սքծուներ մոմ մը վըրիս,  
Քաղաքն անդին,  
Կ'արբըննար իր խըռովիներէն,  
Աչըներուն՝ երազ կարմիր:

Արաւոյս էր,  
Բայց աշխարհը, վայրկեաններու  
Դանակներով,  
Իր երազները կը մորթէր:

Անդին, մարդեր զազանօրէն,  
Ժամանակի նայելիէն  
Կը դիտէին,  
Ոճիրները զալիքներուն:

## ԳԻՇԵՐԸ

Գիշերն է փրաեր երկնին վըրայ,  
Իր սիրամարգի ազին բազմաչեայ,  
Մըսուսէն ոսկի,  
Սըլամներ կ'անցնին աստղերէ աստղի:

Գիշաւոր մ'անդին,  
Վարազահայի նըման նետահար,  
Իր այրող պոչէն՝ աստղերու անհուն  
Աչիներուն վըրայ կը ցանէ մոխիր:

Գըլուխ մը ինչպէս իր մարմնին զաս-  
Ավաէին վըրայ, [տած,  
Դարաւոր մեռել կապոյսներուն խոր՝  
Լուսինն է ահա:

Ու կը մըտածեմ թէ երազ է այս,  
Երազն երկնին,  
Ու ամէն զիշեր, բաղցր ու խըռովիչ,  
Կը կրկնէ ինքզինն:

Երազն ի՞նչ է որ, սուս մը գեղեցիկ:

Վ.ՏԱՐԱՆԴԻՆ





ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

## Ն Ո Ւ Ա Բ

Ճոխ անտառում ես տերեւ՝  
Խ՞նչ տամ կեանիին լուսաւող,  
Ո՛չ զարուն եմ, ո՛չ արեւ,  
Գոնէ լինեմ մի բուռ հօդ,  
Մր իմ սրտից անմշակ՝  
Ծլի մի նուրբ մանոււակ։

Այս աշխարհին նրակէզ,  
Միշ բերքառաս, միշ բեզուն,  
Խ՞նչ նուրիեմ, խ՞նչ տամ ես.  
Լինեմ փոքրիկ մի մելուր,  
Գնամ փեթակ ու բջիջ՝  
Մեղք ըինեմ գէք մի իր։

Տերեւներով ոյորած  
Ծող ու շառայլ անհաւին,  
Կոկոնների մէջ կորած՝  
Լինեմ նկուն դալար օիւ,  
Եւ բախտաւոր մի բայիկ  
Կորէ ուսէկս խաղալիի։

Թէ բախնուի անունն իմ  
Մոռացութեան մուժի տակ,  
Փողնեմ այս լաւ աշխարհում  
Գէք մի փառիկ յիշատակ։  
Եւ իմ սրտից անմշակ՝  
Ծլի մի նուրբ մանոււակ։

\*\*\*

Այս պարզ երգը ես եմ հիւսել  
Ցոյզի թէլ-թէլ յոյսեր բերող,  
Անհուն կարօս ու սէր բերող,  
Աեւ սրտերին սուսեր բերող,  
Այս պարզ երգը ես եմ հիւսել։

Իմ սիրասուն երկրին լուսէ,  
Ցանկացել եմ մի խօսք ասել.  
Երբ ասելու ժամն է հասել  
Այս անպանոյն երզն եմ հիւսել  
Իմ սիրասուն երկրին լուսէ։

Հոգուս խորքում սաղարթախիս  
Գարուններ կան զինչ ու յատակ։

Տերեւ-տերեւ, կարիլ-կարիլ,  
Երգ եմ հիւսել այնտեղ նսած։

Դուրս եմ հաշել սրտիս միջից,  
Ծաղիկներն իմ յոյզով սնած,  
Բայց դեռ հոգուս մարզերում զինչ  
Կոկոններ կան մուս-մուս հնած։

Ցոյզի թէլ-թէլ յոյսեր բերող,  
Անհուն կարօս ու սէր բերող,  
Աեւ սրտերին սուսեր բերող  
Այս պարզ երգը ես եմ հիւսել։

ՄՈ.ՐՕ ՄՈ.ՐԳ.Ա.ՐԵՍ.Ն



## ԲԱՆԱԿԱՐԱՎԱՐՈՒՄ

### ՆԱՐԵԿԱՑԻՆ

ԵԿ

### ՀԵՏԱԳԱՅ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Նարեկացու ստեղծագործութեան ճիշդ արժէքաւորման ու տրավայիշանիրի պատուզութան խնդրում առանձնապէս աչքի են լընկում մեր պոէզիայի խոշորագոյն դէմքերը՝ թումաննեանը և խահակիանը՝ նրանք ամենից խորն են զգացել ու հասկացել նարեկացուն։ Դա նախ և առաջ երեսում է, ինչպէս սկզբում՝ ներածականում նշանած է, զանազան առիթներով նարեկացու մասին կրանց արտայայտած մի շարք մտքերից։

Թումաննեանն ինքը Մարդը (մարդը մեծատառվ) և մարդկայինը գործրած լինելով իր ստեղծագործութեան կիմեկան մոտիվներից մէկը, գեղարուեստական ստեղծագործութեան տեսութեան տեսութեան բնագավառում էլ այն տեսակէտան է զարգացնում, որ իսկական գրականութիւնը մի անդիսի հայելի է, որը ոռչ միայն արտացորում է մամանակը և իր գէպֆերն ու գէմփերը. — գրում է նա 1913 թուին, — այլև տալիս է իր լոյսն ու զերմութիւնը կեանքին, և զգում է կեանքում ստեղծել մարդու են վեհ ու վսիմ, չն մաքսւր ու անազարտ պատկիրը, որ տուել է նրան Աստուած, կազմուած ու հրաւուած բնութեան ամենամաքուր տարրերիցը<sup>(\*)</sup>. Նոյն թօւականին գրած մի ուրիշ յօդուածում նա գրում է. «Կեանքն՝ իր ամրագութեան մէջ մեծ է, շատ մեծ ... կեանքը տիեզերական կեանքն է, և մարդու կեանքի ամրող զեհութիւնն ու քաղցրութիւնն էլ հէնց էն է», որ իր չըջապատի միջոցով ապրի էն մեծ կեանքավ»<sup>(\*\*)</sup>. Այսպիսի գրական մարդը թումաննեանը հակադրում է քաղցրենիական նզնիմ անձնաւութիւններին, որոնք չեն կարող անում այդ կեանքով ապրել և իջնում են մինչև իրենց պատուիկ ես-ի սահմանները։

(\*) Թումաննեանը Քննագատ, Երևան, 1939, էջ 244։

(\*\*) Նոյն տեղը, էջ 238։

Իրեն՝ Թումաննեանի ողջ ստեղծագործութեան բովանդակութեան էտկան գծերից մէկը հէնց այդ պատուիկ ես-ի ժընաւում է և մեծ կեանքով ապրող մարդու ներքին կերպարի կերտումը։ Իսկ այդ դէպարում իրօք յուզիչ օրինակ կարող էր նրա համար հանդիսանալ ԱՄատեան Աղբերդութեան պոէմը, որի հեղինակը այնքան ոլքերգական ցնցումներ է տպրեկ մարդկային պատուիկ ես-ի ժիաման և, ինչպէս Դեմիքնեանն է նիշը նչել, «ամիեցերքը գառնալու» աստիճանին հասնելու ձգաման հանապարհն։

Թէ ինչ սոցիալական հիմք ունիր Թումաննեանի մօս ընծութեան ամենամաքուր տարրերիցց կազմուած ու հրաւուած մարդկային բնաւորութեան և հոգեկան աշխարհի կերտման իրէան և ինչ պատճառներով նա երգում էր պատուիկ ես-իցն գուրա գալու ու տիեզերքի հետ ձուլուելու մասիցը, զրանք, ի հարկէ, յատուկ քննութեան և պարզաբանման թեմաներ են, սակայն մի քան պարզ է, որ գրանք միանգամայն նոր հասարակական պայմանների արդիւնք են և այդ իմաստավ ոչ մի կապ ունեն նաւրիկացու հետ։ Բայց զրանով հանդիերձ, եթէ խօսքը գերաբերում է բնութեան ամենամաքուր տարրերից հրաւուած մարդուն և տիեզերքին միանալով նրա հետ անմահանաւան տինչացող մարդուն, բնականարար թումաննեանը չէր կարող աչքի առաջ չունենալ նարեկացուն։

Այս իմաստով հարցի զրայ կարող է լոյս սփուել Արագիսանի ծննդեան 150-ամեակի կապակցութեամբ՝ Աւետիք Խոսհակեանի գրած «Անոհ Արովիսանի արծանի մօս» խօսքի հետեւալ կատուածը. «Չորս գիրք ունի Հայ ժողովուրդը, որ ինչպէս չորս բարձր սփուեր, կիել են Հայ ժողովուրդի ոգին, նրա պայքարի իմաստը, նրա լաւագոյն ապագայի տեխնանքները, նրա իդէալները։ Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւնը, Եղիշէի Վարդանանց Պատերազմը, նարեկացու Արագիսան և յաւերժութեան հետ և Արագեանի Վէրքը»<sup>(\*)</sup>։

Ինչպէս տեսնում ենք, մեծ բանաս-

(\*) Առվետական արտեստ, Խօն, 1955 թ., էջ 5։

տեղծը ճիշգ բացայայտելով՝ նարեկացու լրատեանի էռութիւնը համարում է խօսքը անսահմանութեան և յաւերժութեան հետ» և իթէ նա այդ գիրքը զնում է Խորինացու, Եղիշէի և Արովեանի գործերի հողաքին, ապա գա նշանակում է, թէ նա նարեկացու երգած յաւերժութեան հասնելու մոտիվի մէջ ժողովրդաբական ու հայրենասիրական իմաստ է ահսնում:

Յայսնի է, որ թէ՛ Թումանեանի և թէ՛ Խաչակիսեանի ստեղծագործութեան մէջ յանախի և հանդիպում այնպիսի գործեր, որոնց մէջ խօսում է տիեզերքին, բնութեանը միանալով՝ անսահմանութեան հասնելու, յաւերժանալու մասին: Նրանք այդպիսով, իսկապէս արտայայտել են ժողովրդի հետ հոգեպէս ձուլուելու և ժողովրդի յաւերժութեան զաղափարը:

Թումանեանի ստեղծագործութեան մէջ այս մոտիվի արտայայտութեան լաւագոյն փաստերը նրա իմաստութեամբ լիցուն քառեաներն են: Թումանեանը, մանաւանդ իր կեանքի վերջին տարիների գրած քառեաներում, մեծագոյն սիրով փառում է այնպիսի խոների, որոնք նրան քարձացնում են մինչև իր ասած տիեզերական կեանքի ըմբռնումը: Անս նա իրեն յօշգող հարցերի շուրջը խօսք է բացել երկնաւէտ Մասիսի հետ:

Բաւձր է նրնոց աւխարհն հայոց ու Մասիսը երկնաւէտ.

Իմ խոր հոգին են բարձունելին խօսք բացել երա հետ, Անհաս բանից, բակրագանցից, երբ չկան ել դեռ չկար, Մինչեւ վախնանն անվախնանի ընթառում է զարդիկար:

Սյուբան խորքերը ձգտող տիեզերական առեղծուածները քննութեան առնող բանաստեղծը հոգով վերանում ու վեհանում է, զրովեան նա ընդունակ է լսելու տիեզերքի մրմունջն ու մեղեղին.

Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին:

(\*) Հ. Թումանեան, Քառեակներ, Երևան, 1938, էջ 50:

Տիեզերքի խոր մելիթին ու մըրմունջը ամենուր (\*):

Այս գէպքում, նա արդէն կարող էր իրեն ազատուած համարել հոգուն խեղճուկ տանջանքներ պատճառող անձուկ հսից և ձգտիլ հասնելու ամենաբարձր ու ամենամեծ հաճոյք պատճառող զգացմունքին իրեն իրեն այլևս չզգալու, ամէնքի հետ լինելու դրութեանը:

Բայց ով կրտայ են վայելքը՝ ինք ինձ ել շրջալիք, ու հալուեի, ծաւալուեի, ամէնքի հետ լինելի ... (\*\*):

Եւ նա հասնում է գրան: Բանասահղի համար գալիս է այն վայրկեանը, երբ նա քառեակներից մէկում իրեն համարում է տիեզերքի տէրը: Այդ վայրկեանը բերկրալից է ու երանակէտ, և նա համակում է մի պայծառ լաւատահուութեամբ ու վերջնական նպատակին հասնելու հաւատով, որովհետեւ նա, միտամանակ, յաղթահարում է իր մէջ, ինչպէս Խահակեանը կ'ասէ՛ յաւերժական կսկիծը բոլոր գոյութիւններին, այսինքն մահուան անխուսափելիութիւնից աաջացած ողբերգութիւնը: Բանաստեղծի հոգին ամրանում է ողջ տիեզերքը պատելով, և նա համոզեցուցիլ հանգստութեամբ վերջնականապէս յանդում է մահուան ժխտման գաղափարին:

Հազար տարով, հազար դարով առաջ բէ ես, ի՞նչ կայ որ, սս եկել եմ, կամ, կը լինեմ յառ ու յաւէտ, ի՞նչ կայ որ. Հազար եսպէս ձեւեր փոխեմ, ձեր խազ է անցաւր, սս միտ հոգի, տիեզերքի մեծ հոգը նետ, ի՞նչ կայ որ (\*\*):

Զգէտք է կարծել, որ Թումանեանն իր ստեղծագործութեան վերջին շրջանումն է միայն այսպիսի մոտիվներ երգել (օրինակ՝ նաև նրա ԱՄիրիուսի հրաժեշտը, ԱՄիրեզերքի ընթերցումը), ու Արուսւեան:

(\*) Հ. Թումանեան, Քառեակներ, Երևան, 1938, էջ 44:

(\*\*) Նոյն աեղը, էջ 41:

(\*\*\*) Նոյն աեղը, էջ 47:

բանաստեղծութիւնները). Նա նոյն այդ վերոյիշեալ խոնկրը արտայայտել է նաև իր ստեղծագործութեան սկզբանական չքջանի գործերում: Բնորոշ օրինակ է «Դէպի անհունը պոէմը»:

Թումանիանը նոյնապէս ուշի ուշով ուշ սումասիրել է Նարեկացու պոէտիկական կուլտուրան և նրանից ստեղծագործոքն օգտագործել է շատ բան: Այսահեղ առաւելապէս ուշագրութեան արժանի է այն փասովը, որ Թումանիանը իր լաւագոյն պոէմերից մի քանիսը հիմնականում զրել է առաջին անգամ Նարեկում գործածուած տառը վանկանի յամբ-անապեստեան երկանդամ սոտանաւորի չափով: Բնաւ պատհական չէ, որ հիմնականում այդ չափով գրուած պոէմերի թւում են օթակարդոցի առումը, «Դէպի անհունը» և անհուշը: Ըստ երեսյթին, այդ պոէմերի ուժեղ բախումներով հարուստ բովանդակութիւնն է, որ նրանց բանաստեղծին մղել է գէպի նոյն չափի գործածութիւնը: Որքան գեղեցիկ ու հարուցած են հնչում, օրինակ՝ «Անուշը»ի այդ չափով գրուած հատուածները:

Կանչում է կրկին /, կանչում անբալար կն չնաղ երկրի / կարօսը անեուն, ...<sup>(\*)</sup>

Շատ լաւ է ստացուել բանաստեղծի լիրիկական շեղումը, նոյնքան լաւ և գեղեցիկ են ստացուել նաև էպիկական նկարագրութիւնները.

Խնչպէս մի հեղիդ / վեր կենար յանձնարձ, Երկրների մըրեած / ամպերի իջներ, Խնչպէս փորորդիկ սաստիկ սրբնաց, Գիւղից սլացան մի խումբ կտրիներ<sup>(\*\*)</sup>:

Արդէն խօսք չի կարող լինել նոյն չափով գրուած այն տողերի գեղեցկութեան մասին, երբ դիալոգներով հերոսների ապարութիւնն են արտայայտուած: Այսպիսով, կարելի է ասել, Թումանիանը գերազանցել է Նարեկացուն երկանգամ տառը վահկանի յամբ-անապեստեան սոտանաւորի բազ-

մադէպ կիրառութեամբ և նրա ստեղծագործութեան փորձը ցոյց է տալիս, որ նարեկացու ստեղծագործի այդ չափը միւս տիսակի ստանաւորի չափերի հետ համեմատած ամենից լնդհանրականն է և ամենից ճկունը՝ տարբեր բովանդակութիւնների նոյն յաջորդութեամբ արտայայտելու արժանիքների տեսակէտից: Եւ բնաւ պատահական չէ, որ մեր քնարերգուներից շատերը իրենց լաւագոյն պոէմների և բառաստեղծութիւնների մի հշանակալից մասով գրել են այդ չափով (օրինակ՝ Ալիշանն իր «Պլառուն Աւարայրին», Յազհաննիսեանն իր «Ժայռը», Տէրեանն իր «Վերագրած» և այլն):

Խոսհակեանն իր ստեղծագործութեան շատ մոտիվներով հոգեկից է հանդիսանում Թումանեանին: Եւ այն ինչ ասուեց Թումանեանի և Նարեկացու ստեղծագործութեան մի քանի կողմերի փոխյարաբերութեան մասին, գերաբերում է նաև խոսհակեանին:

Նախ՝ պէտք է ասել, որ Խոսհակեանի ստեղծագործութեան մէջ մեծ տեղ է բըռնում՝ աշխարհի գեղեցկութեան պաշտամունքը: Այսո, հրաշք է աշխարհը, հէքեաթ է գեղեցիկ և անհուն զարմանալիք<sup>(\*)</sup>, բացագանչում է նրա լիրիկական պատմուածքներից մէկի՝ «Ալապիի վերջին գարունի հերոսը»:

Այս պաշտամունքից բխում է բառաստեղծի ապրած խորը և ուժեղ ներքին գրաման: Ճիշգ է, աշխարհը մի զարմանալի հրաշք է ու գեղեցիկ հէքեաթ, բայց ի՞նչ է այդ աշխարհում ապրող մարդու կեանքի տեսողութիւնը: Խորը ծերութեան հասած Խոսպին Խոսհակեանի պատմուածքում առում է: «— Աւազ, անցաւ հարիւր տարիս մի գիշերուայ երազի պէս ...»<sup>(\*\*)</sup>: Ահա թէ ինչն է ողբերգականը. Խոսհակեանի թափառական Շիգնարը քայլում է և իր հոգու խորքում գառնագին միտք անում մարդու գոյութիւնը մի ակնեարթ լինելու վրայ: Խոկ թուզուն դարձած Բուդղան այսպէս է խորհրդածում աշխարհի

(\*) Հ: Թումանեան, Գեղարուեստական Երեկ, Երեան, 1934, էջ 20:

(\*\*) Նոյն տեղը, էջ 27:

(\*) Ա. Խոսհակեան, Ըստիր Երեկը, Երեւան, 1939, է. 2, էջ 289:

(\*\*) Նոյն տեղը:

ու մարդու մասին. «Տեսայ՝ աշխարհը այնքան մեծ, և զգացող արարածը այնքան փոքր, բայց նրա տանջանքն ու տենչանքը աշխարհից մեծ է»։ Աւրեմն բաւական չէ, որ մարդու կեանքը երազի նման վաղանցուկ է և մի ակնթարթ յաւերժութեան դէմ, այդ ակնթարթն էլ բիրկրաւից չի անցնում։

Խօսակեանը հառականում է, որ մարդու տանջանքները ունեն առաւելապէս սոցիոլական պատճառներ և նա որպէս մարդու երջանկութեան ջերմ նախանձախնդիր, ամէն անգամ խիստ ցասումով է լցում, երբ խօսում է այդ պատճառների մասին, երբ խօսում է անցեալի շահագործման վրայ հիմուած հասարակական կեանքի մասին, մի կեանքի, ուր մարդիկ սիրար կոկորդից պատաս են հանում» և դարձնում են հեքեաթ աշխարհը մի սահաւար ջեհնէմ։

Խօսակեանի պոէզիայում տեղ բռնող աշխարհի՝ տիեզերքի գեղեցկութեան ու մեծութեան և մարդու կեանքի կարձատեւութեան հակասութիւնից առաջացած ծանր ապրումը, որը չփառն կէտեր ունի Մատեանում արտայայտուած Աստծու յաւերժութեան և մարդու վախճանականութեան հակասութիւնից ծնուած սպրեգութեան հետ, յաղթահարում է բնութեանը տիեզերքին միանալով անմահանալու տենչանքով։ Այդ մասիվը խօսակեանն արտայայտել է սուիծազործ ական առաջին խնկ տարիներից սկսած։ Նրա սկզբնական գործերից մէկն է օջիկերական զանգաբանասեղծութիւնը։ Այստեղ կեղինակն առում է, մէ ինքը զգում և տեսնում է ողջ տիեզերքը և որ տիեզերքը մի անհուն զանգ է, իսկ իր հոգին նրա վսեմ լիզուակը։ Տիեզերք-զանգը զի՞ լուսթեան մէջ զօղանջում է անհունութեան, յաւերժութեան, ճշմարտութեան և գեղեցկութեան երգը։

Բուրժուական իրականութիւնից խիստ գժգուհ բանաստեղծը այդ երգի — իր սգու երգի թէերով վերանում և սաւառնում է, ինչպէս մի այլ բանաստեղծութեան մէջ է առում, տիեզերական խորութիւնների անճառ վայրերում։

(\*) Ա. Խօսակեան, Բնտիք Երկեր, Երևան, 1939, հ. 2, էջ 312։

Երկինքն նիստանչ, օֆել, լուսալից, Հոգիս արթացուց լուուրեան երգով։ Եւ այս անցուկից, կեանքի անձուկից Թափ առաւ հողիս երազ-թիւերով։ Եւ տիեզերական խորութիւնների Աննու վայրերում հոգիս սաւառնեց։ Եւ խորախորուրդ, վեհ զալցնիների Անխօս բարբառի լուռ ունկնդրեց(\*)։

Տիեզերական խորախորուրդ զի՞ զալցնիքների բարբառին ունկնդրելով՝ բանատեղձի հոգին հաղորդում է յաւիտենական նութեան խոնքներին և ծուլում է տիեզերի անմահ էռթեան հետո։

Եւ Երկիւլապին հոգիս հաղորդուեց Բաւիտենուրեան խոնքերին վսին, Աննոն եռթեան հալոււց ու ծուլուց, ինչպէս մի ննչիւն, հիւլ մի ննիս...(\*)

Ինչ զիերաբերում է Նարեկացու գոէտ արկական կուլտուրայի ուսումնասիրման և օգտագործման, ապա պէտք է ասել, որ խօսակեանն էլ մեծ ուշագրութիւնն է զարձրել այդ բանի վրայ։ Հետաքրքրական փաստերից մէկն այն է, որ նա իր նշանաւոր պոէմը՝ «Արու-Լալա-Մահարին» զիի է, գարձնալ առաջին անգամ նարիկում գործածուած, յամբանապիստեան քսուան գանկանի ոտանաւորի շափական չափը մեր միւս բանաստեղծները չեն գործածել։ Այնունեւու իսահակիանը յատկապէս պոէմերում և արձակ էջերում (սրոնցից մեծ մասը փաստարէն արձակ պոէմեր են) ճիշջ մօտեցմամբ՝ ստեղծագործութիւնների ու սեղանական եղանականութիւնների կացուածուականութիւնը։

Մեր նոր գրականութեան իննեարիւրական թուականների չըջանի խոչորագոյն բանաստեղծների՝ թուամանեանի, իսահակեանի, Տէրեանի, Մեծ արենցի ու Վարու-

(\*) Ա. Խօսակեան, Բնտիք Երկեր, հ. 1, Երևան, 1939, էջ 281։

(\*\*) Նայն տեղը, էջ 181։

ժանի նման գեղարուեստական խօսքի մեծ վարպետների՝ Նարեկացու ժառանգութեան օգտագործման այս բոլոր փաստերը (սրբացով գեղ բնաւ չի սպառում իրողաւթիւնը), բերում են այն եղակացութեան, որ Հայ գրականութեան վերածնութեան մեծ սկզբանաւորողի գրական կուլտուրան իր որոշ կողմերով՝ առանձնապէս նրա անչափ հարուստ և նոխ բառապաշարը, ատզաչափական և պատկերաւորման բարձր արուեստը, այժմ էլ, մեր օրերում էլ, կարող է ուսումնամիրութեան ու քննադատաբար օգտագործման ալբիւր հանդիսանալ:

Ինչ վերաբերում է մասնաւորապէս Նարեկացու գործերի բառապաշարի օգտագործման հնարաւորութեան խնդրին, պէտք է ասել հետեւալը: Իր տեղում նշուել է Թին, որ Նարեկացին բազմաթիւ բառեր (մօտ երկու հազար) կամ առաջին անգամ գրականութեան մէջ ինքն է գործածել կամ ինքն է ստեղծել: Այդ բառերից մի մասը վաղուց քննհանուր գործածութեան է անցել, ինչպէս օրինակ՝ բողբոջախիտ, մշտափայլ, ծիծաղախիտ, վայելչագեղ, պտղաւէտ, ակներե, խուռներամ և այլն: Բացառուած չէ, որ Նարեկացու ստեղծած ուրիշ շատ բառեր ճաշակաւոր, նրբանկատ և զգուշաւոր մօտեցմամբ՝ ամէն կերպ խուսափելով արխարիկ մոլու տարուելու արտաւոր հակումից, մեր գրողները օգտագործեն լեզուն հարստացներու նպաստակով: Յիշատակենք այդպիսի մի քանի բառեր ոչ թէ անպայման յանձնարարելու իմաստով, այլ նմոյշի համար: Օրինակ՝ արփիանանչ, ակնապարար, գեղածիծած, անձնադատ, ահեղաշուք, գեղատիւնուր, ծիրանածաւալ, ծիրանածաւէն, նոճիաճան, բուրազուարթ, իրաւամերժ, անձեռանսւնդ, խւարասնունդ, գարնանազայր, ահազնատեսիլ, անճողոպրելի, կարօտաճեմ, ահազնատիպ, անբարիխօս, մշտաչարչար, մշտատատան, սիրասնունդ, բիւրակործման, մշտասառոյց բազմահատուած, բիւրամանեայ, սիրաշարժ, լիսնակարկառ, լեսնահորով, կարծրախարիսխ, լնդարձակապարը, վայելչատերե, սիրաբորզօջ, գեղեցիկագեղ, պատշաճակերտ, գեղասազարթ, արջնաթոյր, անձրեածիր, արփիարկերպ, արփիարկերպ, արփիացնցուզ և այլն:

Հասկանալի է, որ տուեալ բառը բանաստեղծութեան մէջ գործածելու դէպքում, պէտք է այն բնականօրէն հիւսուի հեղինակի ոճին և չնկատուի, թէ այն հնից է վիցուած: Հին բառի այդպիսի օգտագործման մի սքանչելի նմոյշ է տուել թուամանեանը իր աԱղթամարը լեզնգում: Երբ նա այդ լեզենցի առաջին տողը սկսում է Նարեկացուց վիցրած ծիծաղախիս բառով (սՄիծաղախիտ Վանայ ծովի . . .), բնաւ չի զգացուում, թէ դա հնում ստեղծուած և այնուհետև շատ քիչ գործածուած մի բառ է:

Ոլգետահայ նշանաւոր գրողներից շատերը, մանաւանդ Զարենցը և Դեմիրճեանը, ուշի ուշով ուսումնասիրել են Նարեկացու ժառանգութիւնը, որի գրական հետեւանքները կարելի է տեսնել նրանց ստեղծագործութիւններում:

\* \* \*

Հայ կին գրականութիւնը համաշխարհային հետաքրքրութիւն և նշանակութիւն ունի. Նրա պատմութիւնը հարուստ է բազմաթիւ պայծառ էջերով: Հայ իրականութեան մէջ՝ ֆէոդալականութեան դէմմզուող գասակարգային սուր պայքարի պայմաններում, առաջ են եկել պրոգրեսիվ շատ գաղափարներ:

Հայաստանը եղել է կուլտուրայի ամենավազ օրրաններից մէկը աշխարհում: Այնտեղից միջնադարեան ֆէոդալական խաւարի դէմ արձակուել են լոյսի ուժգին ճառագայքիներ:

Հայ ժողովրդից ծնուեց միջնադարի ժամանակաշրջանի մեծագոյն քննարերգութանստեղծը՝ Դիրքոր Նարեկացին: Ինչպէս հանձարեղ գրողներից շատերն են գիտակցել, որ իրենց ստեղծագործութեամբ անձնանում են, այնպէս էլ Նարեկացին է երաշալի պատկերացրել այդ, երբ գրել է իր ռԱղբերգութեան Մատեանուում:

Եւ բեկու վախճան լնկալայց իբր զմահացու, Այլ յարակցութեամբ բանի այս սովերի գրեցայց կենդանի:

(Վերջ՝ 19)

Մ. ՄԿՐԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐչՈՒԹԻՒՆ

## ԿՏՈՒՑ ԱՆԱՊԱՏ

**ԳԱՏԱՐԱԿԱՆՆ.** — Կտուց Անապատը կը գտնուէք Վահայլիքին մէջ համանուն կղզիին վրայու Ռևէր մէկ տաճար, կտուցուած յանուն Ս. Կարապետի, և բազմաթիւ խուցի միարանիներու համար: Անապատին իրաւակրօն կանոններուն համաձայն կիներու մուտքը արդիուած էր հոն:

Կտուց Անապատի փանակայիրերէն մէկ մասին անունները թանօթ են: Զանց Կընենք միրճաւոր շրջաններուն պատկանողները, որոնք ընդհանրապէս կարճատե պաշտօնավարութիւն ունեցած են:

1. — Միիրան Աւելափիսկոպոս, 1414—22, որուն ժամանակ իրբ Կտուցի միարաններ կը յիշուին Կարապետ սպասուոր բանի, Մելքիորէթ, Մկրտչ, Կարապետ, Սարգիս, Ցովաննէս, Սիմէն, Ցովաննէս, և Դաւիթ կրօնաւորներ. — Խաչիկեան, Երշա. Ժե. Դարի, Ա., էջ 165—6, Խօտարք, էջ 66, 68:

2. — Գրիգոր Եպիսկոպոս, 1462—83, որուն օրով Ստեֆանոս Վարդապետ Ֆալաք նորոգումներ կը կատարէ. — Խօտարք, էջ 207, Ե. Լալայեան, Վասպուրական, Նշանաւոր Վանքի, Ա., 1912, էջ 73. Ասկեան, Վասպուրականի Վանքիրը, Ա., էջ 60—61:

3. — Ստեֆանոս Վարդապետ, 1604. — Ե. Լալայեան, Ցուցակ Զեռ. Վասպուրականի, էջ 812:

Լիմի Առաջնորդ Ստեֆանոս Շատախնեցի Վարդապետի ժամանակ (1627—47), միարանները շատցած ըլլալով, ոմանք կ'անցնին Կտուց կղզին և հոն ալ կը հաստատեն անապատակն կրօնաւորներու եղբայրանոց մը. — Ա. Դաւրիթեցի, Պատմութիւն, 1896, էջ 254,

4. — Մարտիրոս Վարդապետ, 1681. — Ասկեան, Ա., էջ 66:

5. — Դաւիթ Վարդապետ Թօսարեցի, 1694. — Ասկեան, Ա., էջ 67.

6. — Սիմեոն Աւելափիսկոպոս, 1698—1712, աջակցութեամբ Երեմիա Վարդապետի, կը վերաշնէ Ս. Կարապետի քայլայուած

տաճարը 1712ին. — Լալայեան, Վասպուրական, Եջ. Վանքեր, էջ 74, 77:

7. — Կարապետ Վարդապետ Բաղետօնի, 1723—66, Վանքին պարագերը կը գնաք և չենքերը կը նորոգէ. — Ե. Լալայեան, Վասպուրական, Եջ. Վանքեր, էջ 79. Հանդ. Ամս., 1938, էջ 366. Ասկեան, Ա., էջ 69. Ցուցակ Զեռ. Երուսաղէմի, Գ. և էջ 57:

8. — Աւուլածածուուր Եպիսկոպոս, 1767. — Ասկեան, Ա., էջ 71—4:

**ՄԾՈԿՈՒԹԱՅԻՆՆ.** — Կտուց Անապատի միարանները քիչ են զրադած զրչով ու գրականութեամբ. ունինք հետեւալ սահաւաթիւ անունները.

Ա. — Յովհէփ Քահանայ, 1414ին օրի Կակած է մէկ Աւելարան. — Խաչիկեան, Երշա. Ժե. Դարի, Ա., էջ 165—6:

Բ. — Խաչատուր Արելայ, Գրիչ, 1466—81, որդի Յովհաննէսի և Ասրբելիքի, եղբայր՝ Արծէցի Գրիչ Յովհաննէս Քահանայի օրինակած է:

1. — Աւելարան, 1456ին, զոր ծաղկած է Մինաս Նկարիչ. — Միոն, 1951, էջ 142:

2. — Յայսմաւուր, 1462ին, Մտեփանոս և Խաչատուր Արելաններու ցանկութեամբ. — Խաչիկեան, Ժե. Դարի Երշա., Ման Բ., թիւ 225:

3. — Աւելարան, 1463ին, տանուաէր Հալիֆէ ցանկութեամբ. — Նոյն, էջ 197:

4. — Աւելարան, 1475ին, Առջայ Եղբլշայի համար. — Ե. Լալայեան, Ցուցակ Զեռ. Վասպուրականի, էջ 469.

5. — Աւելարան, 1481ին, Վարդապահ Արելայի համար. — Լալայեան, Ցուցակ, էջ 486:

Գ. — Յովհաննէս Քահանայ, Գրիչ, որդի Մուրատի և Մարգարիտ, աշակերտ Խաչատուրի, օրինակած է Աւելարան մը, 1470ին. — Խաչիկեան, Ժե. Դարի Երշա., Ման Բ., էջ 301:

Դ. — Յովհաննէս Քահանայ, Գրիչ, 1472—83, որդի Խարիբի, աշակերտ Գրիգորի և Խաչատուրի, օրինակած է:

1. — Աւելարան, 1472ին, Մկրտչի և Խազբյակի ինդրանքով. — Ասկեան, Ա., էջ 60:

2. — Ճաւընքիր, 1482ին. ծաղկած է

Միհաս. — Եղիշէ, Երեկան, 1957, էջ LIV:  
3. — Աւետարան, 1483ին, Ասկեան, Ա.,  
էջ 61-2:  
b. — Պօլոս Գրիչ, 1621ին օրինակած  
է մէկ Պատմ. Վարուց Մեծին Ներսէսի. —  
Ասկեան, Ա., էջ 63:  
Զ. — Հայրապետ Երէց, Գրիչ Եւ Կազմող,  
1692-1701:

1. — Մեկնուրիւց Սալիմուաց, Ն. Լամբ-  
րդացւոյ, օրինակած է 1692ին — Ասկեան,  
Ա., էջ 66:

2. — Աւետարան, Կազմած է 1701ին. —  
Լալայեան, Ցուցակ Զեռ. Վասպուրականի,  
էջ 1028:

է. — Մարտիրոս Գրիչ, 1697ին գրած  
է մէկ Բանի Տումարականք. — Ասկեան, Ա.,  
էջ 66.

## ՀՈԳԵԱՅ ԿԱՄ ՀՈԳԻՈՑ ՎԱՆՔ

Հոգեաց Վանքը կը գտնուէր Անձեւաց-  
եաց գաւառին մէկ Տորին մէջ. շրջանակ-  
ուած բարձրաբերձ լիռներով. Թովուն կ'անց-  
նէր Տիգրիս գետը. Խախուպէս անահուական  
մեւեան մը կար հոն, զոր Ս. Բարթողիմէոս  
առաքեալ կը վերածէ կուսանոցի, այնաեղ  
դնելով Ս. Կոյսին պատկերը. Ետքը Ս.  
Գրիգոր Լուսաւորիչ կը նորոգէ և կ'ընդար-  
ձակէ զայն և կը փոխէ կրօնաւորաց վան-  
քի. Վանահայրէրէն յիշատակուած են հե-  
տեւալիները.

1. — Թեկազուոս Նեկյ, 858. — Թովմա  
Արծրունի, Տպ. 1852, էջ 239:

2. — Յովինաննես Արեւապիսկոպոս, 1085.  
— Փիլառոսոս իշխանը կը հրաւիրէ զի՞նքը  
որ իր իշխանապետութեան մէջ կաթողի-  
կոսանայ, բայց նա յանձնչ առներ. — Մատ-  
թէոս Ռուսայիցի, էջ 275:

3. — Տէր Խաչոտուր, 1317. — Խաչիկ-  
եան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 132:

ԺԵ. Դարու երկրորդ կիսուն սկիզբը,  
1453 թւուականին, Յովինաննես Գրիչ Կ'օրի-  
նակէ Շարակենց մը՝ Աստուածատուր Թա-  
հանայի համար. — Խաչիկեան, ԺԵ. Դարի  
Յիշտ., Մասն Բ., էջ 38:

4. — Ատեփանոս Լավիսկապոս, 1557. —  
Իր ժամանակ վանքը ունէր տասնեակ մը  
արելանիր, ինչպէս, Տէր Հայրապետ, Տէր

Սահակ, Տէր Թովաննէս Մահտասի, Տէր  
Յովհաննէս, Տէր Ղազար հէրպետ, Տէր Մար-  
գարէ, Տէր Կարապետ, Տէր Մարգիս, Տէր  
Կարապետ, Տէր Մեսորոս (Մըշրուֆ ?). —  
Ե. Լալայեան, Ցուցակ Զեռ. Վասպուրա-  
կանի, էջ 659:

Խոկ իբրև Գրիչ ծանօթ է Սրբափին Քա-  
նանայ, 1525?—96?, որդի Մելքոնի, որ  
Հոգուց Վանքին մէջ, 1557ին, ձեռնարկած  
է Աւետարանի մը օրինակութեան. — Ե. Լա-  
լայեան, Ցուցակ, էջ 657:

5. — Պետրոս Արեւապիսկոպոս, 1651-5.  
Խոչարի Սիւլէյման Բէկը, որ Վարագայ  
Վանքը կողոպատած էր, կը կանչէ Գետրոս  
Եպիսկոպոսը և կ'ուզէ անոր տալ Վա-  
րագայ Ս. Նշանը որպէսզի իր վանքը  
մնայ. Գետրոս Եպիսկոպոս կ'ընդդիմա-  
նայ: Եւ երբ Սիւլէյման Բէկը կը յայտա-  
րաբէ, որ եթէ գուն չտանիս, ուրիշ քա-  
հանաներու կու տամ, որ տանին վանք.  
Գետրոս Եպիսկոպոս կը պատասխանէ.  
այն ատեն ես ալ իմ միարաններս առնելով  
կ'ելլեմ կ'երթամ ուրիշ տեղ: Ասոր վրայ,  
Սիւլէյման Բէկ իր պահանջնէն ետ կը կե-  
նայ. — Ա. Դաւրիթեցի, էջ 512-3, 520:

6. — Յովինաննես Թիւրիւննի, 1669. —  
Ասկեան, Գ., էջ 771:

7. — Մանուկ Վարդապետ, 1670. —  
Լալայեան, Ցուցակ Զեռ. Վասպուրականի,  
էջ 938:

Ատէ քառորդ գար ետք իբրև Գրիչ  
կը տեսնենք Ղազար Վարդապետ Ամբեցին,  
որ 1696ին օրինակած է Բժշկաւան մը (Կար.,  
թ. 430), իսկ նոյն տարւոյ Մայիս 20ին  
ալ մէկ Զիու Հեկիմարան. — Ասկեան, Գ.,  
էջ 772:

8. — Մարգու Վարդապետ, 1730, որուն  
ժամանակագրաբառութեան կոնդակ մը  
Արքահամ Կաթողիկոս, որպէսզի նպաստ  
հաւաքէ և նորոգէ վանքի հեկեղեցին. —  
Ասկեան, Վասպուրականի Վանքիրը, Գ.,  
էջ 772, 775:

Լսու այսի 1765ին կը նորոգուի Ս.  
Աստուածածին եկեղեցին. — Ասկեան, Գ.,  
էջ 776-7:

9. — Մարքոս Ս. Վարդապետ Կարե-  
կանցի, 1857-1883. — Խառարք, էջ 79, 232:

Ն. ԵՊՍ. ԾԱՎԱԿԱՆ

## ԳՐԱԽՈՍՏԱԿԱՆ

### “ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՀԱՄԵՍՏՈՒԹԵԱՄԲ 562 ԼԵԶՈՒՆԵՐԻ”

Ն Ե Ր Ա Խ Ո Ւ Խ Ո Ւ Խ Ո Ւ Խ  
ՀՐԱՋԱՎ ԱՌԱԽԱՆ. — ԵԵՎԵԱԾ. — 1955. Էջ 655

Ա. — Հիմքիթական ճիշգ: — Այս խոռոքը տոր երեսն եկաւ: Դարձու սկիզբը կատարվող Պօղագքէօյի պեղումները երեան թերին զայն: Հիմքիթերէնը կարգացուեցաւ 1916ին, իսկ ճիշգին մեացեալ լեզուները տակակին վերջին կարելի եղաւ լուծել: Այս լեզուներէն չորսը միայն իրեն հնգառոպական կրնանք նկատել՝ հիբրիդենը, Հույներէնը, Բալյայերէնը և ամենինազրական հիբրիդենըրու: Հիմքիթերէնը կարգացուեցաւ Յ. Հրոզնի կողմէ 1916ին: այս գէպքը որքան կարենոր էր հնգառոպական լեզուարանութեան համար, նոյն քան ևս Ն. Ք. երկրորդ հազարամետի ծանօթացման: Հիմքիթերէնը կը գրուի աքքատերէն թե ենազքային վանկարանով և կը ներկայացնէ հիմքիթական կայսրութեան հիմնագիրներու և իշխանաւորներու լեզուն, որ կը գտնուէր հաթթուշաշի մէջ (Պօղագքէօյ): Խաթթուշաշի գիւանները յայտնաբերեցին հիմքիթական հազարաւոր տախտակներ, որոնք կ'առափնանւորուին մօտաւորապէս 19րդ. և 14րդ. դարերու միջև (Հիմքիթական Կայսրութիւնը կը կործանի 1200ին, Փոխիդական արշաւանքին հետևանքով), և սրոնցմէ տակաւին քիչ բան հրատարակուած է: Առ առնք առհասարակ հետեւեալ նիւթերը կը շօշափեն. — քաղաքական բնոյթ կրող գրուածքներ՝ տարեգիրքեր, հրովարտակներ, գաշնագրեր, արքայական թղթակցութիւններ, կրօնական նիւթեալ մասնաւորուին՝ օրինագիրքեր: Ունինք նաև կարգ մը սումերերէն՝ աքքատերէն՝ հիմքիթերէն բառարաններ: Տակաւին, ե-

գիպտոս, Թէլ-Էլ-Ամառնայի մէջ զտնուած են հիմքիթերէնով գրուած երկու նամակներ (Թզթակցութիւններ Ամէն օֆիս Գ. ի և Արգաւայի թագաւոր Թարխանաւանի միջն): Լեզուն իր կառուցուած քի էսկան զիներուն մէջ ծանօթ է և Թանկարժէք աղբիւր մըն է բազգաստագէտ լեզուարանին համար: Տեղական աւանդութեան մէջ, հիմքիթերէնը կը կոչուէր սնեսերէն, նեսոս քազաքին հետառնչուելով (Ղաշիի, Նէչու Ֆելիք սնեսերէնով): Հիմքիթերէնը խարիս մնունը կը վերապահէնը երկրի առաջին բնակիչներու ոչ հնդերոպական լեզուին: Աւելի նուազ ծանօթ է մեզի Լուլերէնը, որ կը գրասի հիմքիթերէնի նման և որ ժամանակակիցի է անօր: Լուլերէնը խոր հնութենէ մը վեր հաստատուած պէտք էր ըլլար Փոքր Ասիայ մէջ, եթէ Լուլերէն ծագմամբ նկատենք երրորդ հազարամետին սկսեալ Փոքր Ասիայ մէջ տարածուած բոլոր տեղանուուանական կազմութենները: Մէն պարագայի, պատմական չըջանին Փոքր Ասիայ հարաւային մարդն մէջ տեղաւորուած լուլերէնը մերի ծանօյն մի քանի տախտակներով և հաստակուար ձեռով: Մեր ծանօթաւթեան գլխաւոր ազքիւրը երկու լեզուարան հիմքիթերէն՝ լուլերէնի կարգ բնագիր մըն է: Բարառապահական անկիրնէն գիտուած, հիմքիթերէնի շատ մօտիկ լեզու մըն է լուլերէնը, որ կը թուի գործածուած ըլլար իրեն ուռած կորէն, մրցակցարար հիմքիթերէնի հետ իրեք ազգուական լեզու: Հաւանաբար հնդերոպական ծագում ունի նաև բալյիւնըն, որ մեզի հասած է կրօնական բանաւեներ պարունակող հիմքիթական հաւաքածոյի մը մէջ, չափազանց հազուազիւտ նմոյններով:

Տակաւին ծանօթ չէ մեզի թէ ի՞նչպէս կը յորչորդուէր մէկնենագրական արձանագրութեններու լեզուն, զոր առժամարար պիտի կոչենք սմենենազրական հիբրիդենս, և ոչ ալ յայն խօսող ցեղը: Այս բնագիրները, որոնք գտնուեցան Փոքր Ասիայ մէջ և մանաւանդ Սիրիայ հրասիսակողմը, կ'աստիճանաւորուին Ն. Ք. 14րդ. և 8րդ. դարերու միջև, և գրուած են մասնայատուկ մէկնենագրական գրութեամբ մը, կէս զարափարական կէս հնչ արանական արժէքով, որ շատ մը փորձերէ վերջ կարելի կը զառ-

նայ զայն հաւանականորէն կարգաւ։ Ինչ որ կը նախատեսուի լեզուէն, կասկած չի վեցնիր իր հնդկրոպական ծագման շարք։ Բայց, ամենայն հաւանականութեամբ, կրթիթերէն կ ատ, ուրիշ բարբառային խումբի մը կը պատկանի։ Աւոռումասիրութիւննիրը տակաւին իրենց սկզբնական շրջանին մէջն են։ Լուծումը պիտի զիւրանայ չնորհի Գարաթէրէն (Կիլիկիոյ) երկիդուեան գիւնդկերէն-հրթիթերէն բնագիրներու։ Տես L. M., էջ 16-18։

Անտառն մատենագիտութիւն չի տար հրթիթական խումբին առնչութեամբ։ Կուտանք հնտեւեալ ազրիթերները՝

1) Հրթիթերէնի մասին։ — B. Hrozný, Die Sprache der Hethiter, Leipzig, 1917. J. Friedrich, Hethitisch und «Kleinasiatischen» Sprachen, Berlin, 1931. E. H. Sturtevant, A Comparative Grammar of the Hittite Language, Philadelphia, 1933. Խոյնը Hittite Glossary, Բ. Հրատ. 1936. H. Pedersen, Hittitisch und die anderen indoeuropäischen Sprachen, Copenague, 1938. Y. Friedrich, Hethitisches Elementarbuch, Heidelberg, 1940-1946. F. Sommer, Hethiter und Hethitisch, Stuttgart, 1947.

2) Լուժիթերէնի մասին։ — J. Friedrich/ Վերոյիշեալ գործը՝ B. Rosenkranz, Indo-germanische Forschungen, 1938.

3) ԱՄԵԿԵՆԱԳՐԱԿԱՆ ՀՐԹԻԹԵՐԷՆԻ մասին։ — B. Hrozný, Les inscriptions hittites hiéroglyphiques, I-III, Prague, 1937. P. Meriggi, Die längsten Bauinschriften in «Hethitischen» Hieroglyphen, nebst glossar zu sämtlichen Texten, Leipzig, 1934. J. Friedrich, Entzifferungsgeschichte der Hethitischen Hieroglyphen, Stuttgart, 1939. Bonfante & Gelb, The position of «Hieroglyphic Hittite» among the Indo-European languages (Journal of the American Oriental Society, մէջ, LXIV, 1944, էջ 169-190). H. T. Bossert, Ein Hethitisches Königssiegel, Berlin, 1944. Bossert, Oriens I (1948), էջ 163-192.

4) Բալայիթերէնի մասին։ — H. Otten, Zeitschrift für Assyriologie, Neue Folge, XIV, էջ 119-145։ Տես L. M., էջ 69-70։

5) Արիական ճիւղ։ — Այս յորդորջուունք կը հասկնանք իրանի և Հնդկաստանի

լնդարձակ տարածութեան վրայ խօսուող հնդերոպական լեզուներու ամբողջութենը։ Այս լեզուամիանութիւնն մեացող հնագոյն բնագիրները միւս բոլոր լեզուամիաներէն աւելի հարազատ ձեւով կը ներկայացնեն հնդկրոպական նախալեզուի ձեւաբնութեան ընդհանուր վիճակը։ Այս լեզուամիանը միակն է որ մեզի ցոյց կու տայ արժատներու կատարած դերը նախալեզուի մէջ, և նոյնպէս միակն է որ պատմական շրջանին ալ պահած է հնդկրոպական քերականութեան և հողովաները, եայն։ Այս պատմառաւ, հնդկրոպական լեզուներու բազգատական քերականութիւնը կազմուեցաւ այն օրէն՝ երբ արիական լեզուները բազգատառացան յունարէնի, լատիներէնի, ուաւերէնի և գերմաներէնի հետ։ Այսօր ալ, առանց հին արիական լեզուներու գիտաւթեան, անկարելի է որևէ լուրջ ուսուումնասիրութիւն կատարել այս ճիւղին մէջ։ Արիական ժողովուրդները չատ մեծ պետքին մը կազմելով, իրենց իշխանութիւնը տարածեցին Հնդկաստանի հեռաւոր ծայրերէն մինչև Արջիակելագ և Միջիներկան։ Անսնց լեզուն սփոսւելով բազմաթիւ ժողովուրդներու մէջ, չատ չուտ սկսաւ այլափոխութիւն և մեր թուականի սկզբէն արդէն կը գտնուէր զարդացման այնպիսի սատիճանի մը վրայ՝ ուր կը գտնենք լատինական և գերմանական լեզուները անկէ 10 գարեր վերջ։

Արիական ճիւղը կը բաժնուի երկու մասերու՝ հնդկական և իրանեան։ Կախապէս կը Կարծուէր թէ այս երկու մասերը իրարմէ անկախ և անջատ են, բայց յետոյ տեսնը-ւեցաւ որ անոնք իրարու հետ չատ սեղմ նմանութիւններ կը ներկայացնեն։ Կարելի է գրել ամբողջ ստանաւորներ թէ՛ հնդկերէնով և թէ՛ հին պարսկերէնով, որոնք գժուար պիտի ըլլար զանագանել։ Այս իրողութիւնն պէտք է հետացնենք որ հնդկերէնը և պարսկերէնը մէկ լեզուի բարբառներ են և թէ հնդկները և պարսկերը իրենց նախահայրենիքէն միասին զաղթած, շրջան մը միասին ապրած և ապա բաժնը-ւած են երկուքի։ Տեսնենք այժմ այս ճիւղի երկու խումբերը առանձին առանձին։

1) Հնդկական ճիւղ։ — Գալով զէպի Հնդկաստան, հնդկիները առաջին անգամ

հաստատուեցան Խնդրո գետի հովիտը՝ թէն-  
ճապի մէջ։ Այստեղէն ապա անոնք իջան  
Գանձէսի հովիտը և աւելի հարաւ՝ մինչեւ  
Տեկան։ Այդ շրջանին, Հնդկաստան բնակ-  
ուած էր սկամորթ ցեղով մը՝ զոր նուռա-  
նեցին Հնդկրապացի հնդիկները և հետզ հետէ  
զանոնք գէպի հարաւ քշելով։ գրաւեցին  
անոնց հողերը։ Այսօր Հնդկաստան կը ներ-  
կայացնէ տարրեր ժողովուրդներու խառ-  
նուրդ մը։ Հրաւսաւային մասին մէջ կը բնա-  
կին եկուոր հնդկրապացիները, հարաւային  
մասին մէջ՝ բնիկ, ոչ եւրապացի (տրաւիտ-  
եան) ցեղերը։ Հակառակ դարրերու երկար  
միջացին, եկուորները պահած են տակաւին  
իրենց սպիտակ գոյնը, զիլիաւոր այն պատ-  
ճառով որ իրենք զիրենք պանուական և  
կրօնական գասակարգի զիրածած են և  
խուռափած են խառնուելու բնիկ սպիզ»  
շագաներու հետ։

Հնդկերէն կը ներկայացնէ երեք շրջաններ : — ա) Հնդկերէն, որ ունի երեք ստորաբաժանումներ : — 1) Վեսայական հնդկերէն, 2) Դիւզազներզակ հնդկերէն, 3) Սանսկրիտերէն :

1) Վետայական ննդիկերեն: — Աւանդուած  
է մեզի հնդիկներու սրբազան մատեանի:  
Վէտաններու միջոցաւ, որուն առաջին մա-  
սերը (Բիկ-Վէտա) գրուած պէտք է լլան-  
Ն. Ք. 1500 թուին կամ աւելի առաջ, այն  
շրջանին երբ հնդիկները տակաւին ինդոս  
փատի հովիտն էին:

2) Τημερασθενεψιακη ανδρικητεκη: — Απλωνη-  
πιαδης Mahabharata & Ramayana μεծ  
ηγιεινωνικηρηρη πεθιεινανηρη πεθιησων:

3) Սանկրիտերեն: — Այս լեզուն է որ  
աւանդած է մեզի Մեծն Աղեքսանդրի ժա-  
մանակակից Նոդիկ ականաւոր քերականա-  
գէտ Պանিনի իր ընդգրածակ և մանրակրկիտ  
քերականութեամբ: Սանկրիտերէնը դար-  
ձաւ Հնդկիներուն նուիրական լեզուն: Թէն  
այժմ մեռած, բայց գործածալ կը մշակուի  
և կ'ուսումնասիրակ գիտուններու կողմէ:

4) Միջին հնագերեն: - Աւսի բազմաթիւ  
բարբառներ, որոնք ընդհանուր անուամբ կը  
կոչուին Բրագրիզ: Այս բարբառներով գրուած  
են թատերական երկեր և պատմայական  
արձանագրութիւններ, որոնք աւանդուած  
են Աղօգա թագաւորին և իր յաջորդներուն

կողմէ, և որոնց հնագոյնը Ն. Ք. երրորդ գարէն կու գայ: Այս առթիւ, պէտք է յիշատակել նաև Բալի կոչուած լեզուն, որով գրուած են հարաւային Հնդկաստանի պուտայական գրուած քնիերը, որոնց հնագոյնն է պուտայական վարդապետարանը՝ Ն. Ք. տաղին գարէն: Բալին Բրանդրիդական լեզու է: Ան կը ծագի ոչ թէ սանսկրիտերէ: Ենք, այլ աւելի կին լեզուէ մը՝ զոր կարելի է կոչել բընդհանուր հնդկերէն», և որմէ ծագած են բոլորը, ինչպէս սանսկրիտերէնը: Բայց սանսկրիտերէնը աւելի կին է քան Բալին: Թէև Բալին, աւելի ուշ ժամանակի ծնունդ ըլլալով հանգերձ, ունի այնպիսի ձեւեր՝ որնք աւելի կին են քան նոյնինքն սանսկրիտերէնը: Յայտնի չէ թէ ուր խօսուած է Բալին իրք կինդանի լեզու ու ապա գրականութեան անցած:

5) Նոր հնդկերեն : - Այս անուամբ կը հասկցուին զանազան լիգուներ, որոնց գլխաւորներն են . - 1) Աննապի (16 միլիոն), որ կը խօսուի Բէնճամինի շրջանին մէջ, 2) Սինինի՝ Աստրին Ինդուսի շրջանին մէջ, 3) Կիւնարաքի՝ համանուն թերակղզիին մէջ և որ միաժամանակ կուպաց Փարսիներու լեզուն է, 4) Մարաքի (19 միլիոն), Պոմպէյէն, Ֆրիչև Բաջպուտանա, 5) Հինգուսանի (63 միլիոն), կը խօսուի Բաջպուտանայի, Հիմալայայի շրջանի և Գանգէսի տէլէցային մէջ. ամրող հրասաւոյն Հնդկաստանի ազգամիջեան լեզուն է, ունի երկու նշանաւոր բարբառներ՝ Շինչի՝ որ սանսկրիտերէնի աւելի հարազատ ներկայացոցցին է և Ուրցու՝ որ չափազանց ազգուած է պարսկերէնին և արաբերէնին, 6) Պենկալի (50 միլիոն), պէնկալացիներու լեզուն է, 7) Օրիս (10 միլիոն), Օրիսայի լեզուն է: Այս եօթը գիշատոր լեզուներէն զատ, նշանաւոր են նաև Ասսամին՝ Հընդկաստանի հրւսիս արեւելեան շրջանին մէջ, Սինկալի՝ Սէյլան կղզիի հարաւը, Քամերիի և Տարտու կամ Քամթիներու լեզուն՝ Հընդկաստանի հրւսիս արեւելեան մասին մէջ: Այս վերջինին զաւակն է զնշուերենը, Դընչուները հնդերուոպական ժողովուրդ մը եղած են, որ Ն. Թ. 59դ. դարուն զաւակած է դէպի արեւմտետք և զանազան երկիրներու մէջ բնակելէն և մասսամբ աւ ձուլուելէն վերջ, հասած է Եւրոպա (1417ին).

և այստեղէն ալ մինչև Ներոպայի արեւ-  
մտեան ծայրը: Այն տեղէն բառեր փոխ  
առած են և այս փոխառութիւնները այսօր  
մեզի ցոյց կու առն իրենց գաղթականու-  
թեան ուղեգիծը: Հնատու քուչէն անոնք  
անցուծ են Պարսկաստան, որու հիւսիսային  
մասէն մտած են Թիւրքիստան և ապա՝  
Հայոստան: Հոս երկար ժամանակ թիւսկած  
են, որու ապացոյցն են զանազան կարեռը  
փոխառութիւնները հայերէնէն: ինչպէս  
գրաս, ջրի, բարեւ, փոփի և այլն բառերը:  
Ավա Կիչունները մտած են Փոքր-Ասիա,  
յունական կղզիները, յատկապէս Կրետէ,  
ուր շատ երկար ժամանակ գտաքար առնելէն  
վերջ, Պալքաններու վրայով անցած են  
Ներոպա: Այսպէս, Եւրոպյէն նախապատ-  
մական շրջաններուն Հնդկաստան զաղթած  
անգ մը, գէպքերու բերումով, նորէն ետ  
գողքթած է և գրիթէ նոյն ճամրող հասած  
է Եւրոպա: Կիչուններին մէկ տեսակն է հայ  
բոշայերէնը, որուն միայն բառարանը զբն-  
չուերէն է, իսկ ամրողջ քերականութիւնը  
հայերէն է: Հնդկերէնը ունի չափազանց  
ճոխ գրականութիւն: Ազգած է Հետաւոր  
Արեւելքի բոլոր ժողովուրգներուն վրայ:  
Ասոր գլխաւոր պատճառը Պուտայական  
վարդապետութիւնն էր, որ շատ ենունները  
տարածուեցաւ՝ մինչև Աէլլան, Սունտեան  
կղզիներ, Պոռնէոյ, Հնդկաչին, Ցավա,  
Փիլիպեան կղզիներ, Կեդրոնական Ասիա և  
մինչև Ճափոն, ամէն տեղ իր հեռ տանե-  
լով Հնդկական լեզուն և գրականութիւնը:  
Ներկայիս, Հնդկաստանի մէջ, բացի Աէլ-  
լանէն, կը խօսուին 723 լեզուներ և բար-  
բառներ, որոնց ընդգրածակ վիճակգրու-  
թիւնը և Նկարագրութիւնը կատարուեցաւ  
անզիւսական կառավարութեան կողմէ 1911ի  
մարգանամարի ժամանակ: Սակայն, այս  
բոլոր լեզուները և բարբառները չեն պատ-  
կանիր Հնդերոպական ընտանիքին, մա-  
սնաւանդ հնդկերէնին, այլ կը պարունակին  
նաև սեամորթիներու ոչ - հնդերոպական  
լեզուները:

Հեղկերէնի մասին Աճառեան մատենագիտութիւն չունի. կը ներկայացնենք հետեւալ ազդիւրները. —

1) Հնդկանուր ակնարկ մը Հնդկաստանի  
հին և նոր լեզուներու մասին՝ L. Renou և  
P. Meile, L'Inde classique, I., Paris, 1949.

2) *॥०१॥ अर्याकुन्नहर्षे अन्तेवं इमार्हन्* P. Thieme, *Der Fremdling in Rgveda*, Leipzig, 1938. G. Dumézil, le nom des Arya (Rev. hist. relig. 1941. t. 36-51).

4) *ප්‍රමාණප්‍රතිඵල මාවත්*. R. Pischel, Grammatik der Prakrit — Sprachen, 1900. L. Nitti-Dolci, Les grammairiens prakrits, Paris, 1938.

5) Յանսկրիտերէնի մասին՝ L. Renou,  
Grammaire sanscrite, Paris, 1930.

6) *Բալիկընի մասն՝* W. Geiger, Pali Literatur und Sprache, Strasbourg, 1916. Andersen-Smith, A critical Pali Dictionary, Copenague, 1924.

7) Արդիկ հնդկական արթական ճյւղի մասին՝ J. Bloch, l'indo-aryen du Veda aux temps modernes, Paris, 1934; G. A. Grierson, Linguistic Survey of India, Calcutta, 1903-1928; J. Bloch, la formation de la langue marathe, Paris, 1914; R. L. Turner, A Comparative and Etymological Dictionary of the Nepali language, Londres, 1931; S. K. Chatterji, The origin and development of the Bengali language, Calcutta, 1926; T. G. Bailey, Grammar of the Shina language, Londres, 1924; W. Geiger, A grammar of the Sinhalese language, Colombo, 1938. Տե՛ս L. M., էջ 70.

2) Իրանեան ճիւզ : — Իրանեան լեզուն  
ները կը խօսութիւն ընդարձակ տարածու-  
թեան մը վրայ՝ Թիրէքէն մինչև Ինդու-  
կամ Հիւսիսյին Կովկասէն մինչև Հնդկաս-  
տան և Պարսից ծոցէն մինչև Թուրքիստան :

Իրանեան լեզուները ե բարբառները  
կը դասաւորեին հետեւեալ ձևով . —

Հին պարուկերեն: — Պարսիկ լեզուի այս  
շրջանը աւանդուած է մեզի պարսից Աքե-  
մենեան թագաւորներու կողմէ, Ն. Ք. 560  
— 330, իբենց բաեսագիր արձանագրութիւն-  
ներով — (Բերոսոպլիս և այլն): Ասոնք կը  
ներկայացնեն Մարտիստանի լեզուի և իրան-

եան լեզուներու ամենակին յիշատակարան-ներն են, թէև հնդկականէն նուազ կին: Հին պարսկական բնեռագիր արձանագրութիւններու մէջ հնագոյնը կիւրոսի տապանագիրն է, որ կը բաղկանայ 4 բառերէ:

Adam Kurush xshayaօնայա հաշմանիշիա

Նս կիւրոս բազաւոր Ավելենեանց

Բոլոր արձանագրութիւնները երեսունի չափ են և կը պարունակեն լնդամէնը չորս հարիւր բառ:

Հին պարսկերէնը աւելի յետոյ ձեւափոխուելով, կը ստանայ միջին պարսկերէն անունը: Այս յորջորջումով կը հասկնանք պահլաւերենը, որ ունի երկու ստորաբաժանութիւնը: ա) Հին պահլաւերենը կամ Արևականեան պարեւալիս պահլաւերեն, որ պարսից Արշակունի թագաւորական տոհմի (Ե. Ք. 250-226) լեզուն է: այս լեզուէն կը մասն Ավրումանի մագաղաթները, քանի մը արձանագրութիւններ և մանիքէական բնագիրներ, որոնք գտնուեցան Թուրքանի մէջ: Այս լեզուն կը խօսուէր Պարսկաստանի հրւսիս արեւմտեան մասին մէջ, և հայերէնը անկէ շատ փոխառութիւններ կատարած է: բ) Նոր պահլաւերեն կամ Սասսանեան պահլաւերեն, որ պարսից Սասսանեան տոհմի թագաւորներու (226-642) լըրջանի լեզուն է: Պահլաւերէնը աւանդուած է մեզի զանազան արձանագրութիւններով և գիրերով: Պահլաւերէնը խճողուած է բազմաթիւ արամերէն բառերով: կը գրէին արամերէն, բայց կը կարդային պահլաւերէն: ասոր գասական օրինակն է մալքան մալքա, որ թէև այսպէս կը գրուէր, բայց կը կարգացուէր օսհանեան: Այսպիսի արամերէն գրչութիւնը, որ անչուշու դպիրներու յիմարութեան արդիւնք էր, կը կոչուէր հիւզվարե, իսկ անոր պահլաւերէն լնթերցութը կը կոչուէր պազենդ: Արձանագրութիւններու մէջ ամենակինն է Սասսանեան Հարստութեան հիմնակիր Արտաշիր Պապականինը (226-241): Ասոնցմէ քիչ մը աւելի հին են մադդէական գրականութեան մեացորդները, ինչպէս՝ Արտաշիրավաֆը, Կարնամակ Մանոսիրատը, Պունտէհիշը և այլն: Վերջին տարիները, կերընական Ասիոյ մէջ գտնուեցան խօսմք մը մանիքէական գրուած քններ, որոնց պահլաւերէնը քիչ մը կը տարբերէր նախորդներէն և որոնք թուա-

կանով աւելի նոր պէտք է լրայինն Պահաւաերէն գրութիւնը շատ թերի է և իւրաքանչիւր բառ տեղի կու առյ բազմաթիւ սխալ լնթերցութերու, մինչ մանիքէական պահլաւերէնը աւելի պարզ գրութիւն ունի: Հայերէնը միծապէս կը նպաստէ ճշղելու համար, պահանակարութեան անստոյդ և կառակածելի լնթերցումք: Ուստի ամէն պահաւագէտ պէտք է չափաւոր կիրապով գիտնայ նաև հայերէն:

Միջին պարսկերէնը աւելի ձևափոխուելով կը կոչուի նոր պարսկերէն, որու հնագոյն յիշատակարանները կը հասնին մինչև իններորդ դար:

Ամինակին գրուածքը Յ. Ք. 809 թուականէն Արբաս Մերզիցիի մի քանի տող ոտանաւորն է: առաջին գասական հեղինակն է Խուզագիր բանաստեղծը (վախճանած 952էն վերջ), հնագոյն արծակ գրուածքը Ապու Մանսուր Մուզաֆֆակի (շուրջ 970 թուրին) գեղարանութիւնն է: Դրիթէ ասոր ժամանակակից է Ֆիրսուսիի Շահնամէն (շուրջ 1000 թուրին): Պարսկերէնը շատ տարածուած լեզու էր մինչև անդամ Հնդկաստանի մէջ: Տէլէիի արգունիքին մէջ պարսկերէն կը խօսէին, որու արգիւնիքն են այն բազմաթիւ փոխառութիւնները, զորս Հինտուստանի լեզուն ժառանգած է: Աւելի վերջ կը ծաղկին բազմաթիւ բանաստեղծներ և մատենագիրներ, այնպէս որ նոր պարսկերէնը ունի ճոխ և հարուստ գրականութիւն և այսօր այ Պարսկաստանի պետական լեզուն է, ինչպէս որ երկիր մեծագոյն մասին մէջ ժողովրդական խօսակցական լեզուն: Ֆիրտուսիի պարսկերէնը զուտ պարսկերէն է, մինչեւ միւս հեղինակներու լեզուն այնպէս խճողուած է արաբ բառերով, որ աւելի արտերէն է քան թէ պարսկերէն:

ԱՆՌԻՇԱՀԱՆ Վ.ԻԴ. ԶՂՋԱՆԵԱՆ  
(Շարունակելի՝ 7)



## ԵՐԱԽՍԱՂԵՄԻ «ՏԱԳՆԱՊ»-Ը ԵՐԵԿ ԵՒ ԱՅՍՈՐ

**ՆԱԽԱԱՄՈՒՏ.** — 1948ին, լուսահոգի կիրեղ Պատրիարքի վերջին օրերուն եւ հիւանդութեան շրջանին կը զուգափակէր Պաղեստինի աղէտը, որու ընթացքին Միաբանութիւնն ու ժողովուրդը սիրտ ի սիրտ եւ ծեռք ծեռքի խառնած, պիտի պաշտպանէին երուսաղէմի Ա. Յակոբեանց Վանքը եւ նոն ապաստան գտած չուրջ 4000ի հասնող հայութիւնը :

Միաբանութիւնն ու ժողովուրդը, ուումբերու ներքեւ, զրկուած մարդկային կարելի բազմաթիւ անհրաժեշտութիւններէ, բայց զօրավիդ իրարու, պիտի անցնէին արիւնոտ ու չար վայրկեանները՝ որոնք այդ օրերուն Վանքէն ներս ապաստան գտած մեր ժողովուրդին բաժէնը եղան : Պատրիարք, վարդապետ եւ ժողովուրդ, հոգեխառնուած, պատրաստ էին մեռնելու իրարու համար :

Թեոտոյ մահը անձնազոն Պատրիարքին եւ Տեղապահութեան եօթ տարիներու շըրջանը եղիշէ Արքեպաս. Տէրտէրեանի, որուն միակ մտասիւեռու. մը պիտի ըլլար տնտեսապէ կարելի ընել Վանքին եւ անոր պարիսաններէն ներս ապաստան գտած ժողովուրդին կեանքը : Հանգանակիչ նուիրավներ, ՚օգնութեան կոչեր եւ զիմումներ, պիտի կատարէին իրենց փրկարար գերը, հայթայթելով անհրաժեշտը : Հակառակ ընդհանուր անգործութեան եւ պակսող բարիեններու, Միաբանութիւնն ու ժողովուրդը կը շարունակէին իրենց խաղաղ ու հաշու կեանքը, սպասելով լաւագոյն օրերու խոստումին :

**ՆՈՐ ԽՍՌՈՒԹԵԱՆՆԵՐ.** — 1955ի Մայիսին Սրբազնը հիսխային Ամերիկայէն վտարուած նախկին առաջնորդ Տիրան Սրբազնը երուսաղէմի Հայոց Վանք կը վերադառնար, հոն անցնելու իր ամսական արձակուրդը, համաձայն Տեղապահին գրած իր նամակին : Վանք գայէն յետոյ սակայն, պիտի երկարածուէր իր արձակուրդը ամիսներվ, տեւական բնակութեան վերածուելու համար : Հակառակ Տեղապահ Սրբազնի եւ Պատ. Տնօրէն ժողովոյ զիմումներուն որ համէ իրեն արժանավայել պաշտօն մը ստանձնել Վանքէն ներս, Տիրան Սրբազնը միշտ ինքզինքը անորամադիր ցոյց տուաւ, պատրուակելով թէ շուտով ետ Ամերիկա պիտի փրադառնայ : Պաշտօններ ստանձնել չուզեցին նոյնապէս իրեն հետ եւ իրմէ վերջ երուսաղէմ եկող Ռորգոմ, Հմայիսակ եւ Խասհակ վարդապետները :

Պարապ նստած չէր սակայն Տիրան Սրբազնը : Միաբաններու մէջ մշակութային երեկոյթներ կազմակերպելու պատրուակին տակ շաբաթական հաւաքոյթներ կը սարքէր, գպրոցէն ներս գրաքարի եւ ծիսագիտութեան կամաւոր դասեր կ'աւանդէր, առանց Տեղապահի եւ գպրոցի Տեղչի արտօնութեան : Իսկ ցիրեկները բարեկամ տուններ եւ խանութներ կը շրջէր, ազգի, եկեղեցին եւ Վանքի անփառունակ վիճակի մասին բնադատութիւններ ընելու, եւ այդ բոլորին իրեւ միակ սատար ինքզինքը ներկայացնելով : Այսպէս, քանի մը ամիսներու ընթացքին, պիտի կրնար իր շուրջ խմբել իրեն հաւատացող մարդերու եւ կիններու խմբակ մը, որոնք միամտաբար եւ իրենց յատուկ հաշիւներով, այս ինքնակոչ նոր առաքեալին մէջ կարծեցին ողջունել ազգի եւ Վանքի փրկիչը : Եւ ասիկա այն աստիճան, որ իրեն յարող աշխարհական մը, այդ օրերուն թոյլ պիտի տար ինքզինքին յայտարարելու, — ահա Վանքին աստգւածը — : Տիրան Սրբազնը տիրաքար սկսաւ հաւատալ իր աստուածային գերին, եթէ հաւատացած չէր արդէն, եւ կը պատրաստուէր փրկիչը ըլլալու երուսաղէմի Վանքին ու ժողովուրդին : Կ'վերջոյ երուսաղէմ ոստանը եղած էր գարերով մարգարէներու :

Միաբանութենէն ու ժողովուրդին իր շուրջը համակիրներու խմբակ մը կազմելէ յետոյ, անոնց պաշտօն տուաւ, թէ՛ Միաբանութենէն ներս եւ թէ՛ ժողովուրդի մէջ, վարկաբեկել Տեղապահն ու իրեն հաւատարիմները, ամէն առիթ օգտագործելով այս

նպատակին համար : Տեղապահն ու իրենները իրազեկ էին այս բոլորին, գարմանալով Տիրան Սրբազնի գործունէութեան այս կերպին եւ թեթեւամտութեան :

ԴԱՒԼԴՐԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ . — Տեղապահ Սրբազնը, 1956ի Յունիսին, վանրապատկան կտակի մը խնդրով երկու շաբաթուան համար կը ստիպուէր Հնդկաստան մեկնել : Վերադարձին, զարմանքով կը տեղեկանար թէ Տիրան Սրբազնն ու իրենները, փորձեր էին Միաբանութենէն ներս հանրագուէ կազմել, վար առևելու համար Տեղապահը, սակայն հակառակ իրենց ճիգերուն չէին կրցած մեծամասնութիւն կազմել : Տիրան Սրբազնը ծածկելու համար այս դաւադրութիւնը, Տեղապահի Վանք ժամանելէն անմիջապէս յիտոյ, Սուրբէն եւ Պարգև Եպիսկոպոսներու հետ միասին, Տեղապահին կ'երթար, պատրիարքական ընտրութեան շուրջ խօսելու համար : Աւ երբ Տեղապահ Հայրը իր դէմ եղած հանրաքուէի մասին խօսք կը բանար, բացատրութիւն ուղելով Տիրան Սրբազնէն, այս վերջինը կ'ուրանար եղածը եւ կը յարէր թէ պէտք չէր հաւատար ընծայել նման զրոյցներու :

Տիրան Սրբազնը իր յոռի արամադրութիւններու երկրորդ քայլը կ'առնէր, ամբաստանելով Տեղապահը թէ արգելը եղած է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Յորդանան մուտքին : Տակաւին մինչև այսօր, գուցէ Վեհափառէն սկսեալ, շատեր կը հաւատան եւ կ'ուզեն հաւատացնել թէ Եղիշէ Սրբազնին մատոր կար Յորդանանի Կառավարութեան այս մերժումին մէջ : Մինչդեռ իրողութիւնը ներդ հակառակն է : Վեհափառը Անթիլիաս եղած ատեն երբ Երուսաղէմ զալու փափաք յայտնեց, Տեղապահը, Շահէ Վարդապահու իր հետ առած, անմիջապէս Պէյրութի Յորդանաննեան Հիւպատոսարանը կ'երթար, մուտքի արտօնութիւն խնդրելու Վեհափառ Կաթողիկոսի եւ իր հետեւորդներուն համար : Հիւպատոսը Վառարկէր թէ այս պարագային, նկատելով թէ մուտքի վիզա խնդրողներ Սովիէտական երկրէ մը կուգան, ինք չէր կրնար տալ եւ ստիպուած էր հեռագրաւ արտօնութիւն խնդրել Ամմանէն : Երբ Տեղապահը վերադարձին կը հաղորդէր այս պարագան Վեհափառին, այս վերջինը համաձայն չէր ըլլար որ հեռագրաւ ուղուի արտօնութիւնը, եւ ժամանակ չկորսնցնելու համար, նպատակայարմար կը նկատէր Եգիպտոս մեկնիլ, անկէ Երուսաղէմ զալու համար :

Վեհափառը Եգիպտոս մեկնելէն յիտոյ, պաշտօն կը յանձնէր Եղիշէ Սրբազնին, անմիջապէս Ամման երթալ եւ աշխատիլ, ապահովելու համար Վեհափառի Յորդանան մուտքի արտօնութիւնը : Տեղապահ Սրբազնը Պէյրութին նախ Երուսաղէմ եւ ապա Ամման կ'երթար, այս նպատակաւ խնդրանը ներկայացնելու Վարչապետին : Աւ ո՛վ հեգնանիք, նոյն օրը Տեղապահը տակաւին Երուսաղէմ վերադարձած, Տիրանն ու իր խմբակը, մարդաբէական նախաձայնութեամբ, ժողովուրդի մէջ կը տարածէին թէ Կաթողիկոսը պիտի չկրնար գալ, որովհետեւ Տեղապահ Եղիշէ Սրբազնը հակառակ է Կաթողիկոսի Յորդանան զալուն : Տիրան Սրբազնն ու իրենները այս ամբաստանութիւնը ընելէն յիտոյ, առանց Տեղապահի արտօնութեան, հինգ Միաբան Եպիսկոպոսներու ստորագրութեամբ նոր խնդրանը կը ներկայացնէին Վարչապետին, Վեհափառի Երուսաղէմ զալու առնչութեամբ :

Երբ արտօնութիւնը ուշացաւ, Երուսաղէմ խմբուած Եպիսկոպոսները Կաթողիկոսի կողմէ կանչուեցան Պահիրէ, հոն գումարելու համար Եպիսկոպոսական ժողովները : Տիրան Սրբազն, որու Յորդանան ընակելու արտօնութիւնը սպառած էր եւ հրահանգ ընդունած էր ներքին Գործոց Նախարարութենէն ճգելու երկիրը, Եգիպտոս չուզեց գալ, վախսալով որ չէր կրնար վերադայնալ : Սակայն իր մարդիկ Եգիպտոսի մէջ բայր էին Կաթողիկոսին եւ ուղիղներու, թէ Եղիշէ Սրբազնը պատճառ եղած է Վեհափառի Յորդանան Հիւպատոս գալուն : Պահիրէի մէջ Կաթողիկոսը անձամբ կը հաղորդէր Տեղապահին այս պարագան, աւելցնելով թէ ինքը չէր հաւատար ըսուածներուն եւ կը յուսար որ Յորդանանի Կառավարութիւնը վերջ ի վերջոյ պիտի չուզեր մերժել Երուսաղէմ երթալու իր փափաքը :

Զաջորդ օրը, Պահիրէէն, Եղիշէ Սրբազնի ստորագրութեամբ, արաբերէն գր-

ուած ընդարձակ հեռազիր մը կը դրկուէր Յորդանանի Թագաւորին, խնդրելու Նորին Վեհափառութենէն մուտքի արտօնութիւն Կաթողիկոսի համար. Եպիսկոպոսական ժողովներէն յետոյ, դարձեալ Կաթողիկոսի յանձնարարութեամբ, Տեղապահ Արքազանն ու Եանէ Վարդապետը Ամման կուգային, մուտքի արտօնութեան համար: Այս առթիւ Վարդապետը կը յայտնէր թէ Կոօպ փաշայի երկրէն փոարուելուն առիթով ընդհանուր տակնուվարաւթիւն կար, թէ երբ իրերը իրենց բնականոն վիճակը գտնեն միրով նկատի կ'ունենան եղած խնդրանքը: Երկու շաբաթներ յետոյ, երբ Վեհափառող արքէն մեկնած էր Եւրոպա, Յորդանանի Կառավարութիւնը տուաւ խնդրուած արտօնութիւնը, սակայն Վեհափառը այլեւս չուզեց գալ, հեռազրաւ յայտնելով Եղիշէ Սրբազնին թէ շատ կարեւոր ժամադրութեամբ ստիպուած էր շուտով Մոսկուա ըլլալ: Հակառակ այս բացորոշ իրողութեան, Տիրան Արքազանն ու իր բիկը շարունակեցին իրենց զրապրտութիւնները, յայտարարելով թէ Եղիշէ Սրբազնին էր պատճառ Կաթողիկոսի երուսաղմէն մասնաւալ գալուն:

Եղապահն դէմ մասնաւոր կերպով տարածայնուած այս սուտ լուրերէն յետոյ, Տիրան Արքազանն ու իրենները սկսան ամբաստանել Եղիշէ Սրբազնը թէ եօթ տարիներէ ի վեր կը Վարէ Տեղապահի պաշտօնը եւ չուզեց պատրիարքական ընտրութիւն ընել տաւ: Մինչդեռ իրականին մէջ, երկից Միաբանութիւնը յետաձգել ուզած էր ընտրութիւնը, երբ Տիրան Արքազանի ներկայութեան 1950 և 1952ին կը համախմբուէր եղակացնելով իր տեսակէտը, թէ որբան ատնի որ Երուսաղմէնի կացութիւնը չէ ճշշդուած եւ արար երկիրներու եւ Խորայէի վէճը եղակացութեան մը չէ յանգած, նպատակայարմար չէր պատրիարքական ընտրութեան ծեռնարկել: Ասկայն երբ Տեղապահ Հայրը զգաց որ Միաբանութեան մէկ մասին մէջ պատրիարքական ընտրութիւն ընելու փափաք կայ, քանի մը օրեր վերջ, Միաբանական Ընդհ. ժողովի գումարման նախօրեակին, նիւթ ըրաւ պատրիարքական ընտրութեան հարցը: Ժողովը անզրադարձաւ այս խնդրին եւ երեք անձերէ բաղկացած յանձնախումբ մը ընտրեց, որ նկատի ունենայ ցարդ յետաձգուած ընտրութեան հետ կապ ունեցող պարազաները եւ բերէ իր տեղեկազիրը Քնդի. Ժողովին:

Միաբանական Ընդհ. Ժողովի որոշումին համածայն, յանձնախումբը, կազմուած Գեր. Տ. Տիրան եւ Գեր. Տ. Հայկազուն Սրբազններէն եւ Հոգ. Տ. Զաւէն Վարդապահուէ, իր տեղեկազիրը Միաբանական Ընդհ. Ժողովին պիտի բերէր Սեպտեմբեր ամսու տապազին շաբաթուան մէջ: Տակաւին յանձնախումբը իր աշխատանքները չսկսած, լուր տարածուեցաւ թէ Ներքին Գործոց նախարարութիւնը կցուցած է Տիրան Արքազանի Յորդանան մնալու արտօնութիւնը եւ հրահնազած է իրեն որ երկու շաբաթուան ընթացակին հեռանայ երկրէն: Հոս, ի զարմանս շատերու, կ'ուզներ նշել թէ այս քշանին Տիրան Արքազանի, իր վերջի վեց ամիսներուն, Յորդանան կարենալ մնալու արտօնութիւնը Տեղեպահի միջամտութեան շնորհի կը կարգադրուէր. այս իրողութեան կրնան վկայել Երուսաղմէ այդ շրջանի եւ այժմու Կառավարիչ նորին Վսեմութիւն Հասան Էլ Քաթիպը եւ Ս. Աթոռոյս դիւնապետ Պր. Կարպիս Հինգեւանը: Հակառակ այս երկաթագիր երողութեան, Տիրան Արքազան ամէն տեղ եւ ամենուն Տեղապահը կը նկատէր պատճառը նախրութեան կարօս իրողութիւնը մըն է, որուն ծալերը չներ ուզեր հոս բանալ, սակայն Կառավարութեան կողմէ իր նկատմամբ ցոյց տրուած անբարեացակամութեան, գէթ ստորագրութիւնը Եղիշէ Սրբազննին էր: Տեղապահը եթէ ոչ մարդկան առնել, ի հեճուկս արարին համածայն էր, կանխելու փանազը, որ սկսած էր մարդին առնել, ի հեճուկս Երուսաղմէ Կանքին եւ Յորդանանի մերազն ժողովուրդին: Մանօթ էր մարդը եւ յայտնի էր տարողութիւնը իր ընելիքներուն: Խակ թէ ուրիշներ, որոնք յետոյ իրեն զօրագիր պիտի էր տարողութիւնը իր ընելիքներուն:

Տեղապահն չէր զրապրտազիրին բուն հեղինակը, այդ պարագան առանձինն ուսումնական կարօս իրողութիւնը մըն է, որուն ծալերը չներ ուզեր հոս բանալ, սակայն Կառավարութեան կողմէ իր նկատմամբ ցոյց տրուած անբարեացակամութեան, գէթ ստորագրութիւնը Եղիշէ Սրբազննին էր: Տեղապահը եթէ ոչ մարդկան առնել, ի հեճուկս արարին համածայն էր, կանխելու փանազը, որ սկսած էր մարդին առնել, ի հեճուկս Երուսաղմէ Կանքին եւ Յորդանանի մերազն ժողովուրդին: Մանօթ էր մարդը եւ յայտնի էր տարողութիւնը իր ընելիքներուն:

հանդիսանային, ինչե՞ր ըրած են իր գէմ, զինքը երկրէն դուրս վտարելու համար, ա-տիկա իր առանձինն թղթածրարը ունի, որուն հոս առ այժմ անդրադառնալու պէտք չինք տեսներ :

Տեղապահին վերագրուած, աւելի ճիշտ՝ ամբողջապէս իր անձին վրայ փոռուած այդ գրպարտագրի փոխարէն, Տիրան Սրբազն ու իրենները ունին բազմաթիւ գրպարտա- գրեր, որոնք կարող կը հանգչին, այժմ այլևս վտանգաւոր նկատուող թղթածրար- ներուն խորը : Անոնցմէ մաս մը կը մնային Տեղապահի անձնական թղթածրարին մէջ, որոնք իր բացակայութեան, սննդակին գոյցերու վիխսադրութեան առիթով, անհետա- ցած են : Սենեակէն վերցուած են նոյնպէս Տեղապահի բոլոր անձնական նամակներն եւ թուղթերը, առանց բացառութեան . այս պարագան ծանօթ է Միաբանութեան բոլոր անդամներուն : Վարոյիշեալ թուղթերէն միայն մէկը ունինք մեր տրամադրութեան տակ, Տիրան Սրբազնի կողմէ երուսաղէմի եւ Ս. Տեղեաց Վասեմ. Կառավարիչին գրուած, ո- րուն մէջ որքան բառ այնքան սուտ կայ : Հոս կուտանք թարգմանութիւնը այդ գրին :

### Զերդ Վասմութիւն

Մուհաֆզը երուսաղէմի եւ Ս. Տեղեաց  
երուսաղէմ

### Զերդ Վասմութիւն

«Թոյլ առւէք խնդրեմ Զեր ազնիւ ուշադրութեան յանձնելու հետևեալը : Համաձայն երուսաղէմի Հայոց Պատրիարքական ընտրութեան վերաբերեալ օրէնքնե- րուն, Պատրիարքական Տեղապահի իր ընտրութենէն քառասուն օրեր յիսոյ, պարտաւոր է կատարելու Պատրիարքական ընտրութիւնը եւ արդինքը տեղիկացնելու Լոնտոն, թագաւոր կայսեր հաւանութեան, տեղական կառավարութեան միջոցով :

Այս կանոնը անցած է Միաբանական Ընդհ. Ժողովէն նախ 18 Յունիս 1930 ին եւ ապա 30 Դեկտ. 1930 ին եւ ընդունուած ժամանակի խնամատար կառավարութեան կողմէ :

Տեղապահի եւ Միաբանութեան քանի մը անդամներու կողմէ յտածգուած է Պատ- րիարքական ընտրութիւնը, այն առարկութեամբ, թէ Նորին Վեհափառութիւն Հաշիմա- կան թագաւորը ի վիճակի չէ Պատրիարքական գէրթ տալու ընտրութեան պարագային :

Սակայն ես եւ Միաբանութեան միւս անդամները 1950 ի գարնան, իմ կարճ այցե- լութեան միջոցին յերուսաղէմ, յայտնեցինք թէ Նորին Վեհափառութիւն Յորդանանի Հաշիմական թագաւորը իր ամբողջական իրաւունքին եւ հեղինակութեան մէջ է ըն- տրուած Պատրիարքին Պետք տալու : Դալոյ այն իրողութեան թէ Պաղեստինի կէսը գրաւուած է Խորայէլի կողմէ, Պատրիարքական ընտրութեան հարցին հետ ո եւ է կապ չունի եւ թէ Խորայէլը մեզի համար կը նկատուի օտար պետութիւն մը :

Մեզի համար շատ թանկագին պիտի ըլլար Զերդ Վասմութեան տեսակէտը այս խնդրի մասին, որովհետեւ Զեր հեղինակաւոր կարծիքը պիտի յստակացնէր կացութիւնը եւ պիտի դիւրացնէր մեր Հայ Համայնքի Պատրիարքական ընտրութեան հարցին լուծումը :

Հաւատարմօրէն եւ յարգանօր

Զերդ Վասմութեան

Տիրան Սրբեազ. Ներսոյեան

Տիրան Սրբազնի կողմէ երուսաղէմի Վասեմ. Կառավարիչին ներկայացուած այս գիրը, որուն պատճէնք կառավարիչին կողմէ ատելին մեզի զրկուեցաւ ի գիտութիւն, իրադրութիւններուն ամբողջապէս անհամապատասխան ստագիր մըն է, աւելին՝ որ զայն կը վերածէ իրական զրպարտագրի մը՝ այն է, որ Տիրան Սրբազն գիտնալով հանդիր իրողութիւնները, անոնց ճիշտ հակառակը կ'արտայալուի :

Ա. — Եղիշէ Սրբազնի Տեղապահ ընտրուելէն յեռոյ, նկատի առած տնտեսական մեր կացութիւնը եւ քաղաքական անկայուն վիճակը, Միաբանութիւնն էր չուզողը որ պատրիարքական ընտրութիւն կատարուի եւ ոչ թէ քանի մը Միաբաններ:

Բ. — 1950ի գարնան, երբ Տիրան Սրբազն Ժոնէվի ժողովէն երուսաղէմ կուգար, ուր գացեր էր Տեղապահի փափաքով երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը ներկայացնելու, իր ներկայութեան, երբ ամբողջ Միաբանութիւնը հրաւիրուեցաւ իր զեկոյցը լսելու, հոն դարձեալ երբ պատրիարքական ընտրութեան խօսք եղաւ, ամբողջ Միաբանութիւնը միահայնութեամբ յարմար նկատեց որ յետագուի ընտրութիւնը:

Գ. — 1953ին, երբ Տիրան Սրբազն Շուշի առաջ գումարուելիք միջեկեղեցական ժողովին կ'երթար, դարձեալ երուսաղէմ հանդիպցաւ եւ իր փափաքին վրայ, նորէն ամբողջ Միաբանութիւնը Պատրիարքարանի փոքր դահլիճը հրաւիրուեցաւ. անզամ մը եւս պատրիարքական ընտրութիւնը խնդրոյ առարկայ եղաւ, բայց ժողովը միահայնութեամբ համաձայն չգտնուեցաւ որ ընտրութիւնը փութացուի: Ժողովին ներկաները շատ լաւ կը յիշեն Տիրան Սրբազնի եւ Գեր. Տ. Կորայր Եպս.ի բախումը այս հարցի վերաբերմամբ:

Դ. — Տիրան Սրբազն. Ամերիկայէն Տեղապահին գրած իր երեք նամակներուն մէջ, յատկա կերպով կը յայտարարէր թէ որքան ատեն որ արաբական եւ հրէական հարցը երուսաղէմի նկատմամբ իր լուծումը չէ գտած, պէտք չէր պատրիարքական ընտրութեան ծեռնարկել: Իր նամակներու այս պարունակութեան տեղեակ են Միաբանութեան անդամներէն եւ մեր ազգայիններէն շատերը:

Ե. — Անիմիշն զրպարտութիւն մըն է, Վսիմ. Կառավարիքին գրուած նամակի այն յայտարարութիւնը, թէ պատրիարքական ընտրութիւնը Տեղապահին կողմէն յետաձըգուած է, որովհետեւ Նորին Վեհափառութիւն Յորդանանի Թագաւորը ի վիճակի չէ նկատած, ընտրութեան պարագային, գերբ տալու: Տիրան Սրբազն, իր հակուակութեան մէջ կուրցած, չէր անդրադառնար թէ բաղաբական այս ծանրակշիռ սուստ յայտարարութեամբ, ոչ միայն օրուան Տեղապահը, այլ ամբողջ Հաստատութիւնը կը զրպարտէր ու կասկածելի կ'ընէր յաչս Յորդանանի Թագաւորին եւ Կառավարութեան:

Հնդիակառակն, քաղաքականութիւն խաղալ փորձող այս իմաստունը, Անգլիական Արտաքին Նախարարութեան զրած իր նամակին մէջ, որուն ուբէն մեզի դրկուեցաւ այդ շրջանին, միջազգային օրէնքները սերտած բանգէտի մը պէս, կը յայտնէր թէ՝ առանց գերբնի ալ մենք պէտք է ըննենք պատրիարքական մեր ընտրութիւնը, եւ թէ Յորդանանի Թագաւորին ներկայացնելու պէտք չկար այս պարագան, իբրև երուսաղէմի մեր Միաբանութեան յատուկ գործ: Ահա թէ ինչօ՞ւ համար կ'ըսէինք, որքան բառ այնքան սուստ կայ երուսաղէմի եւ Ս. Տեղեաց Վսիմ. Կառավարիքին գրուած իր նամակին մէջ: Սուստէն անդին, չարութիւն ու նենգութիւն, որոնք թոյլատրելի չեն պաշտօնական նման պարագաներուն:

(Ծորունակելի՝ 1)



## ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՏԵՂԱՊԱՀԻՆ

